ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ ԺԱ. ՏԱՐԻ Ի. ՆՈՅԵՄԲԵՐ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Աշխարհ. (Թարգմ.) Գ. Ե. Ա. . . . 469

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարմնամարզութեան բարոյական եւ գեղասիրական նշանակութիւնը. Սարգիս Տ. Գաբրիէլեանց . . . 480

Աշխարհաբառ լեզու եւ քննադատութիւն (շարունակելի) Միաբան . 450

Նոյեմբեր ամիս. (բանաստ.) Ներսէս Տ. Աւետիքեանց . 498

ԱԶԳԱՅԻՆ. Հանդէս Բ. Տարեդարձի Օծման Վեհ. Հայրապետի ազգիս.— Նուէր Կ. Պոլսից եւ Մայր Տաճարի վերանորոգութիւն. — Թուղթ Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ. — Կոնդակ Վեհ. Կաթուղիկոսի առ Ս. Պատրիարք Կ. Պոլսոյ. — Հաշիւ Շամախւոյ եկեղեցական երկդասեան դպրոցի. — Հաշիւ Թելաւի ծխական երկսեռ ուսումնարանաց. . 500

ԱՅՆ ԵՒ ԱՅԼՔ. 508

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. Դիւան Վեհափառ կաթուղիկոսի. Քաղուածք յօրագրութեանց Սինօդի (վարչական դատաստանական). . . 508

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. 511

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԼԶ—1887

ՑՈՒՑԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամսագիր տարեկան ամբողջ կազմեալ	2	—
Աւետարան համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Ֆրանկլինի կեանքը	—	30
Գիրք հանդիսակատարութեանց կայսերական տնից	—	50
* Գոթողիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական հաւատոյ. Աբէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ. վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա. Գալֆայեան	1	—
* Ժամագիրք ատենի	8	—
Ժամագիրք ձեռաց	2	—
* Լուսարան Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Կ. Պօլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հռիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս. Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Դ. տարեդարձի Գէորգեան Ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ ԺԱ. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՆՈՅԵՄԲԵՐ. 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ.

(Քաղուածոյ ընտիր ճառերէ գաղղիացւոյ Մասսիլյոն անուն Կլէրմոնի եպիսկոպոսի)։

Ի՞նչ է աշխարհս նոյն իսկ աշխարհասէրների համար, որ նոքա վայելչութիւններովն արբած են երևում, և որոնք որ առանց այդ վայելչութիւնների ապրել չեն կարող։ Մի գերութիւն է մշտական, որոյ մէջն ոչ ոք իւր համար չէ ապրում, և որ՝ բաղդաւոր լինելու համար՝ պէտք է կարողանանք մեր շղթաները համբուրել և մեր ստրկութիւնը սիրել։ Մի ամենօրեայ խռովութիւն, մի շփոթութիւն է՝ պատահարներից, որ իւր համախոհների սրտում մին միւսից առաջ են բերում ա-

մենաստանիկ ու ամենատխուր կրքեր, անմոռանալի ու անխիղճ ոխ ու քէն, ատելի երկբայութիւն ու տարակուսանք, դառն երկիւղ, ինքն իրան ուտող նախանձ, սիրտ կտրող տրտմութիւն։ Մի անիծուած երկիր է, ուր որ հէնց փայլչութիւններն էլ իրանցից անբաժան բերում են հետներն իրանց փուշերն ու իրանց դառնութիւնները։ Խաղը ձանձրացնում է իւր կատաղութիւնովն ու իւր երևակայական յոյսերովն ու հաշիւներովը. խօսակցութիւնները զզուեցնում են, երբ որ խօսողների հաճոյքը մեզ հակառակում է, կամ բոլորովին ջոկ զգացմունք ենք նորանց մէջ տեսնում. կրքերն ու անհամեստ սիրոյ յարաբերութիւններն ունին իրանց տաղտկալի կողմն, իրանց անյաջողութիւններն, իրանց ցաւերն, իրանց դառնութիւններն, լսուած անախորժ ձայներն։ Թատրոնական հանդէսները հանդիսականների մէջ գտնելով իրանք իրանց գրեթէ միայն անպարկեշտութեան տուած հոգիներ, և որոնք որ ընդունակ են գրգռուելու անվայել վարքի ամենահրէշաւոր ու ամենատգեղ չափազանցութիւնով միայն, անախորժ ու անհամ բան են դառնում, որովհետև շարժումեն միայն այն քնքուշ կրքերն, որոնք որ հեռուից ցոյց են տալի միայն անբարոյականութիւն ու թակարդ լարում անմեղութեան։ Վերջապէս, աշխարհս մի տեղ է, ուր որ յոյն անգամ, որ մի քաղցր ու ախորժ կիրք է մարդուս համար, բոլոր մարդոց էլ անբաղդացնում է, ուր որ նոքա, որոնք որ յուսալու բան չունին, իրանց աւելի ողորմելի վիճակի մէջ են տեսնում, ուր որ ամենայն բան, ինչ որ մեզ դիւր է գալի, երբէք երկար ժամանակ մեզ համար դիւրական չէ լինում, և ուր որ ձանձրութիւնը գրեթէ աւելի հաճելի՝ կամ աւելի տանելի վիճակն է, որին մարդս կարող է հասնել։ Ահա ինչ է աշխարհս. և այս՝ այն կոյր աշխարհը չէ, որ չէ հասկանում թէ՝ ինչ են մեծ փայլչութիւնները, բարօրութիւնը, բարերարութիւնը. պաշտպանութիւնը, սէրը, հարստութիւնը. այս այն աշխարհն է, որ իւր գեղեցիկ կողմովն է երևում այս մեզ, մեծամեծների աշխարհն է։

Եթէ որ աշխարհս մեզ չկապէր իւր հետ մեր ներկայ դրութեան բաղդաւորութիւնով, ինչպէս որ երբէք որևիցէ մի մարդու չէ բաղդաւորեցնում, այնպէս էլ իրան պաշտողները չէր

ունենալ երբէք։ Ապագան, որ նա մեզ միշտ ցոյց է տալիս, իւր մեծ միջոցն է, որ ունի, և իւր մեզ շլացնող այն պատրանքն է, որից խորշել՝ կամ փախչել չենք կարողանում։ Նա մեզ կապում է իւր հետ՝ իւր տուած յոյսերովն, չկարողանալով մեզ գոհացնել իւր տալու պարգևներովն, և իւր՝ մեզ սխալեցնող խոստումները՝ մեզ քնացնում են միշտ իւր այն բարիքների ակնկալութիւններովն, որ ոչինչ են դուրս գալիս։

Մարդիկ, որ ամենայն օր խօսում են թէ՝ մարդկային ամեն բաներն ոչինչ են, ըստ ամենայնի ճշմարիտ խօսք է, բայց նորանց լեզուին պէտք չէ հաւատալ, ինչու որ պակաս չեն հետևում ունայնութեան ու մոլորութեան ճանապարհներին։ Մենք անդադար ասում ենք թէ՝ աշխարհս ոչինչ է, ու միայն աշխարհի համար ենք ապրում։ Խելօք ենք միայն՝ մեր ասած խօսքերի մէջ, իսկ անխելք ենք մեր գործերի մէջ. փիլիսոփաներ ենք մեր անօգուտ խօսակցութիւնների մէջ, ամենաստորին կարգի տխմար ժողովուրդ ենք մեր վարքի բոլոր ընթացքի մէջ. գիտենք միշտ ճարտար լեզուով աշխարհիս անունը կոտրել, ու միշտ գիտենք տաք սրտով սիրել նոյն աշխարհը, մենք ծունր ենք դնում՝ բազմութեան հետ այն կուռքի առաջն, որ նոր ոտքի տակ քցեցինք, տրորեցինք, ու մեր՝ աշխարհս արհամարհելուց յետոյ՝ անմիջապէս տեսնում ենք, որ նոյն աշխարհին ամենայն մեծարանք ենք տալիս։ Ինչ որ մեծ է երեւում աշխարհի աչքումը, մեզ համար էլ մեծ է, ինչ որ նա բաղդաւորութիւն է ճանաչում, միակ երջանկութիւնն է, որին սրտով ձգտում ենք, ինչով որ նա պարծենում է, միակ փառքն է, որ մեր սիրտը շարժում է։

Ամեն մի բան վտանգ է աշխարհումս. վտանգներ կան մեր նշանաւոր տան զաւակ լինելումն, որովհետև ենթարկուած ենք լինում ամեն կրքերի. վտանգներ կան բարձր վիճակի հասնելու մէջն, որովհետև ամեն բանի մէջ՝ մեզ այնպիսի օրէնքների է հետևել տալիս, որ Աւետարանը դատապարտում է. վտանգներ կան հասարակաց հոգսերը վիզ առնելու մէջ, որովհետև պէտք է վիզ առնենք՝ թէ մեծերի կրքերին ու թէ ստորին կարգի ժողովրդոց կարօտութիւններին ու թշուառութիւններին համեմատուիլ, աստուածային կրօնի սկզբունքը կապել մարդկային խոհեմութեան հետ, և պիտի ընտրենք՝ կամ հետևել մեր

խղճմտանքին, կամ թէ մեր օգտին, մեր շահախնդրութեանը։ Վտանգներ կան մեծ բարիքները գործածելումն, որովհետև անգաղափար ինքներս մեզ պէտք է արգելենք ու պահպանենք՝ կամ չափազանցութիւնից, որ թելադրում է մեզ սնափառութիւնը, կամ պահպանենք մեզ անգթութիւնից, որ յառաջ է բերում ժլատութիւնը. վտանգներ կան օրինակ տալու մէջ, յանցանքը կորցնում է իւր պարսաւելի նշանակութիւնը՝ իբրև անօթայի և անմաքուր գործ՝ այն մարդոց կողմանէ, որոնք որ իրանց ձեռքն իշխանութիւն ունենալով, մեզ գայթակղական օրինակ են տալիս, ու մենք ապահովւում ենք, ուրիշների թուլութիւններով և արած սխալմունքներով մեզ էլ արդարացնելով մեր վատ գործ բռնելում. վտանգներ կան ուրիշների հետ վարուելու մէջն. մարդ ուզում է, որ իրան հաւանեն, ու հաւանելի է լինում միայն կիրքերով, որ ուրիշը շարժում է իւր սրտի մէջ. վտանգներ կան բարեկամութիւնների մէջ, թոյնը մտնում է մեր սիրտը՝ բնաւորութիւնների նմանութիւնով, ընկերութեան հաճոյական զուարճութիւններով. առանց աղատ խօսքերի չէ անց կենում, ու աշխարհս անմեղութեան համար մահաբեր նիւթեր է տալիս. վտանգներ կան մէկի հետ միևնոյն բանի ետևից ընկնելում. մէկն ուզում է բարձրանալ, ու դժուար է սիրել նորանց, որ մեզ ոտ են դնում, կամ որոնց որ մեզանից գերազանց են տեսնում. հէնց որ շահերը ջոկուեցան, երկար չէ անց կենում, որ սրտերն էլ իրարից բաժանվում են. վտանգներ կան ամուսնութեան մէջ, սարինքով իրար հետ ապրելով, միմեանց վերայ ունեցած սէրը, քանի գնում է, սառչում, քիչ է պատահում որ՝ բնութիւնով իրար նման լինելը՝ հաստատի իրանց մէջ եղած կապն, որ գրեթէ միշտ պահվում է միայն այն ժամանակ, երբ որ շահերի մէջ էլ նմանութիւն կայ, տարբեր ակնկալութիւններ չկան մէջ տեղը. մի սուրբ ընկերութիւն դառնում է մի տան փորձութիւնն, և հէնց որ պարտականութիւնը դառնում է լուծ, որ դրուած է մեր վերայ, սիրտը գիտէ իւր համար ուրիշ շղթաներ շինել. վտանգներ կան աղատութեան վիճակումն կըրքերն, որ առնձ չունին իրանց սահմանից դուրս են գալի ընդդէմ մեր կամքին, ու ողբը միաւորութեան կապից հեռանալը՝ շատ անգամ մի աւելի ընդհանուր գերութիւն սիրել է.

վտանգներ կան այս աշխարհիս մտքի ու սրտի ուղիղ լինելու մէջ. հէնց որ աշխարհս մեզանից գոհ է, մենք մեզ համոզում ենք, թէ Աստուած էլ գոհ է. առաքինի մարդու անուն ունենալը մենք խառնում ենք իսկապէս առաքինի լինելու հետ. և որովհետև չունենք այն յանցանքները, որ աշխարհս դատապարտում է, կարծում ենք թէ՝ Աւետարանի մեզանից պահանջած բոլոր առաքինութիւններն ունինք. վերջապէս վտանգներ կան բարեպաշտութեան մէջ, որովհետև բարեպաշտութիւնն աշխարհիս մէջ քիչ է. այն գովեստները, որ տրվում են աստուածպաշտ մարդու ունեցած եռանդին, շատ անգամ կրօնասիրութեան սկզբունքը փչացնում է. առաջ, որ մարդս առաքինութեան մէջ Աստուածութիւնն էր գտնում, մէկ էլ տեսար՝ Աստուծոյ տեղ իւր անձն է ճանաչում առաքինութեան մէջ, ինքն է երևում իւր աչքին.

Ահա աշխարհս։ Եթէ ազատվում ենք մէկ վտանգից, շուտով միւսի մէջն ենք ընկնում, ուրիշ փորձանքի պատահելով։ Եթէ մեզ տուած օրինակից չենք փախչում ու հաստատ ենք մնում մեր ունեցած գաղափարի և համոզմանց վերայ բարեկամութիւնն է մեզ մոլորեցնում, դէպ ի չարը տանում. եթէ շահը մեզ չէ շարժում, փառքն ու հաչակն է մեզ իւր ետևից քաշ տալով տանում. եթէ մեզ հեռու ենք պահում մեծ չափազանցութիւնից, մեզ անզգայ չեն գտնում աւելի ախորժ ու աւելի վտանգաւոր կրքերն։ Եթէ որ հակամիտութիւնը մեզ հեռացնում է անկարգութիւնից ու անառակութիւնից, հաճոյակատարութիւնն ու զուարճութիւնն է քցում մեզ այդ սխալանքների մէջ. եթէ մենք պատուասիրութիւնից ազատ ենք մեր անձի համար, տեսնում ենք որ այդ կրքերը մեր մէջ զարթնում են մեր զաւակաց համար. եթէ մենք հաստատ ենք մնում մեր մտքում, որ պատճառներ չպտռենք, չէինք կարող պատասխանել այն պատճառներին, որ մեզ են պտռում։

Մտիկ տանք այն մարդոց վերայ, որոնք որ ծերացել են աշխարհիս կեանքի մէջ, և որոնց որ միայն հասակը հեռացրել է նորա վայելչութիւններից. նորանց աշխարհասիրութիւնը, մեռնում է իրանց հետ միայն, դրսից իրանց փոխուած են ցոյց տալի, կըկարծէիր, առաջուանը չեն. բոլորովին ուրիշ մարդիկ են արդէն, բայց փոխուած միայն և-

րեւում են, որովհետեւ այդ է պատշաճ ու վայելուչ իրանց հասակին. իսկ իրանք նոյն աշխարհասէրներն են, նոյն հակամիտութիւններն ու յօժարութիւններն ունին, նոյն սաստիկ սէրը վայելչութիւնների. դեռ եւս մի երիտասարդական սիրտ կայ իրանց մէջ, թէեւ ժամանակից փոխուած ու մաշուած մարմնոյ մէջ։ Սիրով միտներն են բերում առաջուայ տարիների ուրախութիւններն, եւ իրանց երեւակայութիւնից սխալուելով ու խաբուելով, իրանց մէջ կենդանանում են այն ամեն բանն, որ տարիքն ու ժամանակը մեր ձեռքից առել է. նախանձելով են մտիկ տալի պատանեկութեան ծաղիկ հասակի ու այդ տարիքին յատուկ զուարճութիւնների վերայ, ուզում են ունենալ այն ամենայն զուարճութիւններն, որ կարող են յարմար ու պատշաճ համարուիլ իրանց հասակին, որին յատուկ պիտի լինի ծանրաբարոյութիւնը. պատճառանքներն իրանց համար պակաս չեն, թէ կան դեռ եւս զուարճութիւններ, որ իրանք կարող են ունենալ, առանց պատշաճի դէմ մի բան անելու, ու առանց ենթարկուելու հասարակաց ծաղր անելուն։ Վերջապէս, որչափ աշխարհս մեզանից հեռանում է ու փախչում, աւելի սիրով ենք վազում նորա ետեւից, քան թէ երբ եւ իցէ այդ չափ ընկել ենք նորա ետեւից։ Երկար տարիներ աշխարհս վայելելը մեզ այնպէս է անում, որ աշխարհս մեզ համար աւելի կարեւոր է դառնում ու առանց նորան մեզ ապրելն՝ անկարելի է։

Աշխարհիս երեսին հաստատ բան չկայ ամենեւին. ամենեւին. ամենայն ինչ փոխվում է. ոչ մեծ բաղդաւորութեան հաւատալ կարելի է՝ թէ միշտ կունենանք, ոչ փառաւոր վիճակի, ոչ հարստութեան, ոչ յաջողութեան, ոչ սերտ բարեկամութեան, ոչ մեծ անուան, ոչ ամենանախանձելի պաշտպանութեան ու սիրոյ։ Մարդ տեսնում է մի գերագոյն իմաստութիւն, որի կամքն է, ինչպէս որ երեւում է, խաղալ մարդոց հետ՝ մի քանիսներին բարձրացնելով՝ միւս ընկածների տեղն՝ եւ պատուից ու աստիճանից քցելով, նուաստացնել նորանց, որոնք որ բաղդաւորութեան ամենաբարձր աստիճանին էին հասել, որպէս զի բարձրանան նորանք, որոնք որ՝ երբ էր դեռ՝ նուաստ վիճակի մէջ՝ որդնի պէս սողում էին նորանց առաջ. յառաջ բերելով ամեն օր նոր նոր քաջազուններ, ու նսեմացնելով անունն ու փառքն

այն մարդոց, որ առաջ շատ փայլուն դեր էին կատարում, անդադար նոր ներկայացումներ տալով տիեզերքիս թատրոնի վերայ։ Մարդիկ անց են կացնում՝ բոլոր իրանց կեանքն անհանգստութիւնների, հոգսերի, ծրագիրներ կազմելու, ճանապարհներ ու հնարքներ գտնելու մէջ, միշտ զգոյշ են մնում՝ կամ իրանք իրանց խաբելուց կամ ուրիշներից խաբուելուց· միշտ աչքաբաց, միշտ յաջողակ ու փութաջան են օգուտ քաղելու՝ ոչ միայն իրանց նման նոյն պաշտօնին ցանկացողների ունեցած յուլութիւնից ու յետ մնալուց, այլ և ունեցողների գործից յետ քաշուելուց, աչքից ընկնելուց, մեռնելուց, և՝ աշխարհս արհամարհելու այս մեծ խրատներից իրանց համար պատուասիրութեան ու հեշտասիրութեան նոր նոր շարժառիթներ են գտած լինում· միշտ զբաղուած են՝ կամ իրանց ունեցած երկիւղներովը, կամ յոյսերովը· միշտ անհանգիստ են ներկայի կամ ապագայի համար· երբէք հանգստութիւն չունին· ամէնքն էլ աշխատում են հանգստութիւն գտնելու, և միշտ աւելի հեռանում խաղաղ ու հանգիստ վիճակի հասնելուց։

Աշխարհս ինքն իրան այնչափ մի տխուր մի ձանձրալի տեղ է, որ մեզ դիւր գալ, կամ մեզ խաբել չի կարող· մենք պէտք է մէջը խառնուինք ու օգնենք նորան մեր սխալներովն ու մոլորութիւններով, որ նորա անզօր հրապոյրները մեզ վերայ զօրութիւն ունենան։ Այսպէս ուրեմն այս անարգ աշխարհս, որ մենք սիրում ենք, ոչ մի տեղ գոյութիւն չունի, չկայ, մեր խելքից հնարած մի կեղծիք է, որ մեր մէջը միայն կայ, մի երևակայական աստուածութիւն է, ու բոլորովին մեր սրտի արտադրած բանը։ Մեր ցանկութիւններն ու մեր յոյսերն են մեր աստուածներն, որոնց որ զոհ ենք բերում ամէն բան, և որոնք որ մեր միակ հաճութիւններն, ուրախութիւններն են ու մեր ամենասաստիկ կրքերն։

Ի՛նչ միջոց, ի՛նչ հնարք ունի՝ իւր հանգամանքները դէպի լաւը փոխելու՝ այն մարդն, որ զոհել է աշխարհին և իւր տէրերուն՝ իւր հանգստութիւնն, իւր խղճմտանքն, իւր ունեցած չունեցածն, իւր պատանեկութեան ու երիտասարդութեան լաւ տարիներն ու առողջութիւնն, որ մաշել է իւր կեանքը ծանր աշխատութիւնների մէջ՝ հնազանդ ծառայութիւնով

ընտանի յոյսերի համար՝ ու յանկարծ տեսնում է, որ իւր առջեւն փակուեցան բարձրանալու եւ բաղդաւորութեան դռները. որ ձեռքինը խլեցին այն տեղերն, որ իրան արժանացրել էր ունենալու, եւ որ կարծում էր թէ՝ իրանն են. որին երկիւղ են տալի թէ՝ իւր ունեցած տեղն էլ կկորցնի, եթէ որ տրտունջ ցոյց տայ, որ ստիպուած է խոնարհել իրանից աւելի բաղդաւոր իւր նախանձորդների առաջն, ու կախումն ունենալ նորանցից, որ երբեմն մտքինը չէր անց կենում, որ մի օր արժան կհամարի նորանց հրամանի տակը լինելու, նորանց հրամաններն ընդունելու: Ի՞նչ անի այդպիսի դրկուած մարդն. Արդեօք աշխարհից հեռանա՞յ, գնայ մի խուլ տեղ, որ իւր անվերջ տրտունջներովը վրէժխնդիր լինի մարդոց անարդարութեան: Բայց ի՞նչ արած կլինի իւր քաշուած անկիւնում, եթէ ոչ աւելի ազատ միջոց գտած կլինի ցաւելու՝ ու քիչ մխիթարութիւն՝ իւր վշտերն ամոքելու եւ իւր սրտից հանելու: Արդեօք իրան նման մարդոց տարաբաղդութեան օրինակո՞վն ինքն իրան մխիթարի: Բայց մեր անբաղդութիւններն, մեր աչքումը, ամենեւին նման չեն ուրիշի անբաղդութեանն, եւ, բացի սորանից, ի՞նչ մխիթարութիւն է մեզ համար զգալն, որ նորոգվումեն մեր սրտի ցաւերն, որչափ էլ որ գտնումենք մեր քաշածների օրինակն ու ճշգրիտ պատկերն ուրիշների վերայ, միտներս բերելով նորանց ունեցած զրկանքներն: Արդեօք ամփոփուի՞ այսպիսի մարդն իւր մէջ, ունայն փիլիսոփայութիւններ անելով, ու իւր խելքի ուժովն ինքն իրան պահպանելով: Բայց մեր բանականութիւնն, երբ որ մենակ է մնում, շատ շուտ է իւր հպարտութիւնից ձանձրանում ու յոգնում, հասարակութեան համար փիլիսոփայ լինելը կարելի է, բայց իւր համար մարդս միշտ մարդ է մնում: Արդեօք իւր գլխի ճարն ա՞յն համարի, որ ինքն իրան տայ զուարճութիւնների ու անպարկեշտ հեշտասիրութիւնների: Բայց մարդուս սիրտն՝ իւր կիրքը փոխելով, միայն իւր պատիժն է փոխում: Արդեօք անզգայութեան, անտարբերութեան ու ծուլութեա՞ն մէջ պտռի իւր բաղդաւորութիւնն, որ չկարողացաւ գտնել իւր յոյսերի ու ակնկալութիւնների եռանդի մէջ: Մի յանցաւոր խղճմտանք կարող է անտարբեր լինել, բայց նորանով հանգստութիւն չի գտնիլ: Կարելի է, այլ եւս չզգայ իւր ձախորդութիւն-

ներն ու իւր անբաղդութիւնները, բայց միշտ կզգայ իւր անհաւատարմութիւնն ու իւր յանցանքները։

Աշխարհս մեզ խելքից աւելի հանում է ու իրան յարմարեցնում, իւր հետ ընտանեցնում այն գեղեցիկ բաներովն, որ մեզ խոստանում է, քան թէ մեզ հրապուրում է այն իրական շնորհքներովն ու բարիքներովն, որ մեզ պարգեւում է։ Գրեթէ ոչ ոք այն մարդկանցից, որոնց որ աշխարհս, հրապուրելով, իրան է քաշում, գոհ չէ իւր վիճակովն. և եթէ մի աւելի բաղդաւորութիւն ունենալու յոյսը չմեղմացնէր մեր ներկայ հանգամանքի մէջ ունեցած, մեր նեղութիւններն ու դեռ աւելի չկապէր մեր սիրտն աշխարհիս հետ մեր սխալուած լինելը ճանաչելու ու նորանից զզուելու համար՝ բաւական էին մեզ այն մեծ դառնութիւնները, որ մենք նորա մէջ գտնում ենք։ Բայց մենք ամեն մէկս ծածուկ շատ խելօք ենք մեզ խաբելու մեր ներկայ հանգամանքի դառնութեան կողմանէ, փոխանակ մտաբերելու, որ աշխարհս չի կարողանալ մեզ բաղդաւոր անել, և թէ ուրիշ տեղ պէտքէ պտռել այն երջանկութիւնն, որին որ մենք փափագում ենք, և որ աշխարհս չէր կարող մեզ տալ, մենք նորա վերայ ենք մեզ խոստանում միշտ այն, ինչ որ մեզ պակաս է և այն, ինչ որ մենք ցանկանում ենք ունենալ։ Մեր ներկայ նեղութիւնները, մեր ունեցած դառնութիւնները մեղմացնում ենք, քաղցրացնում՝ մեր խելքից հնարած ապագայի յուսով, և մեր անընդհատ ու ողբալի գիժ ու միժ մտածմունքներով՝ մենք անօգուտ ենք հանում այն դառնութիւններն և նեղութիւններն, որ Աստուած թափում է մեր անարդար կրքերի վերայ, մեզ դէպի ինքն կանչելու համար, այն յոյսերովն, որ իրողութիւնը միշտ սուտ է հանում, բայց որ մենք մեր անղգուշութիւնից ու արած սխալից էլ առիթ ենք գտնում կրկին ընկնելու նոր անղգուշութեան, նոր սխալանքի մէջ։ Մեր երևակայութեան սխալանքով տեղը դնում ենք այն, ինչ որ պակաս է մեր ցանկութեանը հասնելու համար. մենք երբէք չենք վայելում, միշտ յոյս ենք ունենում վայելելու։ Ուզում եմ ասել թէ՝ ներկայ աշխարհս չէ, որ մենք սիրում ենք, մենք նորա մէջ բաւական բաղդաւոր չենք, այլ մեր խելքից հնարած աշխարհն է, որ մենք մեզ համար շինում ենք, իրական երջանկութիւնը չէ, այլ մեր աչքին

երևեցող մի պատկեր է, որի ետևից վազում ենք, առանց երբէք կարողանալու հասնել նորան. ու մեր աչքը խաբող մի բան է, որ խաղում է մեր առաջ ու միշտ մեզ հեռուումն է երեւում, և որ աւելի է հեռանում ու անյայտանում, երբ որ մենք կարծում ենք թէ՝ ահա հասանք նորան՝ ու բռնեցինք։

Սնափառութիւնը, պատուասիրութիւնը, չափազանց ծախքը ուտելիքի, հագուստների և՝ ընդհանրապէս շքեղ ու փափուկ կեանք անցկացնելու համար՝ աչքը չկշտանալը հաւաքելուց, ու ելացնելուց՝ ահա այն առաքինութիւններն, որ աշխարհս ճանաչում է, ընդունում ու յարգում, ահա այն առաքինութիւններն, որոնց հետևել է սովորում իւր համախոհներին։ Նորա առաջն ուղիղ սիրտ ունենալը՝ միամտութեան, անփորձութեան ու անմտութեան տեղ է անցկենում. երկու երեսանիութիւնը, կեղծաւորութիւնը, խորամանկութիւնն ու խաբեբայութիւնն՝ մի արժանիքի տեղ, որ նա պատւում է, բոլոր իւր ընկերակցութիւնները թունաւորած են անկեղծութեան պակասութիւնով։ Մարդուս բերնից դուրս եկած խօսքն իւր սրտի թարգմանը չէ աշխարհիս ընկերութիւնների մէջ, այլ դիմակն, որոյ տակը նա ծածկվում է ու կերպարանքը փոխում։ Խօսակցութիւնները՝ ստախօսութիւններ են, որ դրսից կեղծ բարեկամական ու քաղաքավարական կերպ ունին։ Շռայլում են միմեանց նախանձելու չափ գովասանք ու շողոքորթութիւններ, ու իրանց սրտի մէջ պահում ատելութիւնը, նախանձն ու արհամարհանքը նորանց դէմ, որոնց որ գովում են։ Փոխանակ ամենքն էլ միմեանց վերայ մտիկ տալու՝ իբրև մի ընտանիք միայն կազմող մարդոց վերայ, որոնց շահերը պէտք է հասարակաց լինին, այնպէս է երևում, որ մարդիկ իրար հետ կապվում են միայն իրար փոխադարձաբար խաբելու համար ու խարդախութեան որպէս և խորամանկութեան կազմած՝ միմեանց խաբելու մէջ իրարից յետ չեն մնում։ Ամենասաստ օգուտն եղբայր եղբօր դէմ է դինում, մօտիկ բարեկամը մօտիկ բարեկամի դէմ, արենակցութեան ու սրտի բարեկամութեան բոլոր կապերը խզում, ու մի չնչին պատճառ է, որ վճռապէս որոշում է ու յայտնի է անում մեր ատելութիւնն ու սէրը։ Մեր ընկերի մեծաւորի կարիքները, ձախորդութիւններն ու անբաղդութիւնը մեր

սրտի մէջ հանդիպում են անտարբերութեան, անկարեկցութեան և մինչև անգամ՝ քարասրտութեան, երբ որ կարելի է՝ առանց մի բան կորցնելու՝ զանցառութեան տալ, կամ՝ երբոր մի օգուտ չկայ նորանից օգնելուց:

Եթէ որ ճանաչէինք աշխարհիս խորքը, մտիկ տայինք նորա մէջն. եթէ որ կարողանայինք մտնել նորա սրած հոգսերի, ունեցած մտատանջութիւնների ու սիրտ սեւացնող անհանգստութիւնների ծածուկ մանրամասնութիւնների մէջ. եթէ որ կարող լինէինք այս առաջին կեղևից, դրսից մեզ երևեցածից՝ դէնն՝ դէպ ի ներսի կողմն անցնել, որովհետև դրսից մեզ երևացածը միայն ուրախութիւն, միայն վայելչութիւններ, միայն շքեղութիւն ու փառք է, մեր աչքին երևեցածիցն ո՞րչափ տարբեր բան կտեսնէինք: Կտեսնէինք ներսը թշուառներ միայն, որ հայրն ու որդին սրտով իրարից հեռու են, սէր չկայ մէջները, մարդ ու կնիկն իրար երես տեսնել չեն ուզում, ընտանիքների գաղտնիքը միայն դրսի մարդկանց աչքից ծածկուած են, իսկ մէջն՝ ատելութիւն, նախանձ, տրտունջ ու անհամաձայնութիւն է մշտապէս: Այդպիսի մարդկանց ու ընտանիքի մէջ սիրոյ ու մտերիկ բարեկամութեան մէջ պղտորութիւն է ընկնում կասկածներից, շահախնդրութիւնից ու կամապաշտութիւնից: Ամենամտերիկ կապերը թուլանում են, ու ամենամօտ սրտերն իրարից սառչում, հեռանում են անհաստատութիւնից: Խանդակաթ սէրն վերջանում է ատելութիւնով ու անհաւատարմութիւնով: Բաղդաւորութեան ամենալաւ հանգամանքները կորցնում են իրանց համն ու հոտն այն հնազանդութիւնովն ու հպատակութիւններովն որ մեղանից պահանջվում են: Ամենապատուաւոր տեղերն ու պաշտօններն ոչ թէ մեզ ուրախացնում են, այլ տխրութիւն պատճառում, որ չենք կարող աւելի բարձր տեղեր բռնել: Ամեն մարդ գանգատ է անում իւր վիճակից: Ամենից աւելի բարձր դիրքի հասած մարդիկն աւելի անբաղդներն են: Իրանց աստիճանովն ու իրանց հարստութիւնովը բարձրանում են, կարծես, երկնքիցն էլ բարձր, էլ մարդոց աչքին չեն երևում, այնքան բարձր դիրքի են հասել: Նորանք միւս ամեն մարդկանցից շատ բարձր են երևում, այն մեծ յարգ ու պատուովն, որ իրանց տալիս են, այն փառքովն, որով շրջապատուած են, այն շնորհքներովն

ու բարիքներով, որ շատերին անում են, այն մշտական շողոքորթութիւններով, որ անբաժան ընկերներն են բարօրութեան մէջ եղողից և իշխանութիւն ձեռքումն ունեցողից. բայց մինչև անգամ իրանց կշտացած լինելովը աշխարհիս վայելչութիւններից և ձանձրացած լինելովը պատշաճին ու վայելուչին յարմարուելուց ու հպատակելուց, որպէս և իրանց անկարգ ու անճոռնի ցանկութիւններովն, իրանց ուտող նախանձովն, և այն ցածութիւնովն, որ անում են՝ իրանց մեծին դուր գալու համար, որպէս և իրանց սրտի այն դառնութիւնովն ու ցաւովն, որ զգում են, նորանք հասարակ ժողովրդից աւելի ցած են ու նորանից աւելի դժբաղդ։

(Թարգմ. գաղղ.) Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՍԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

«Ես չեմ գտնում աւելի գեղեցիկ, որքան ես փնտռեմ, քան գեղեցիկ ձեւի մէջ գեղեցիկ հոգին»։ Շիլլեր.

Մարմնամարզութեան նշանակութիւնն ոչ մի ազգ այնպէս խոր ըմբռնած չէր և ըստ այնմ նորան թէ կրթութեան և թէ ազգային կեանքում այնպիսի մեծ արժէք տուած չէր ինչպէս Յունաց ազգը։ Նրանց մէջ մարմնամարզութեան վսեմ նպատակը ֆիզիքական և մտաւորական ոյժերի կատարեալ ներդաշնակութիւնից կախումն ունէր։ Մարմնի ոյժերի և բոլոր մասերի ներդաշնակ զարգացմամբ պիտի ձեռք բերուէր ոչ միմիայն ֆիզիքական գործունէութիւնը այլ և հոգեկանը՝ որ է խոհադատութիւնը, արիութիւնը վճռականութիւնը. և սոքա պէտք է մարմնական ոյժերի հետ ի միասին ու նրանց միջոցով զարգանան, այնպէս որ մարմինն մի արի, կորով և ընդունակ գործիք դառնայ հոգու համար. որպէս զի հոգին պէտք եղած միջոցին նրան (մարմնուն) գործածել կարողանայ։ Մարմնականի և հոգեկանի այս ներդաշնակութեան մէջ կայանումէր մարմնամարզութեան բարոյական և գեղասիրական նշանակութիւնը։ Զէ որ խոհադատութիւնը և քաջութիւնը Պղատոնի չորս գլխաւոր առաքինութիւններին (իմաստութիւնը բանականութեան առաքինութիւնն է, քաջութիւնը՝ արիու-

թեան, չափաւորութիւնը՝ ցանկութեանցը, և արդարութիւնը՝ բոլոր միւս առաքինութիւնների կապ և միութիւնը) էին պատկանում, և միևնոյն փիլիսոփան է որ անուանումէ Աստուծուն Նախագեղեցիկ, իսկ աշխարհը՝ տիեզերքի Ճարտարապետի ամենագեղեցիկ գործը և մարդուն՝ ամենագեղեցիկ արտադրութիւն նորա մէջ։ Թէ մարդը և թէ ամբողջ արարչութիւնը նորա կարծիքով, ոչ այլ ինչ է, եթէ ոչ աստուածութեան էութեան յայտնութիւնը, իսկ գեղեցիկն է միմիայն նորա մէջ արտայայտուած աստուածային գաղափարն (Idee.) ըստ այսմ՝ աշխարհի Ճարտարապետի, ամենագեղեցիկ արտադրութեան նպատակն է դիմել դէպի այդ գաղափարն, աշխատել դորա պարզութեան և մաքրութեան վերականգման և պահպանման համար, այն է ձգտել դէպի գեղեցկութիւնը։

Հելլէնները չէին ուրանում մարմնամարզութեան հոգեկան նշանակութիւնը և մեծ արժէք էին տալիս առողջութեան պահպանութեանը, ուժի բազմացնելուն. մարմնի տոկունութիւնը և ճարպիկութիւնը, որ մարմնական մարզմունքների միջոցին, որպէս կողմնակի արգասիք, ինքն ըստ ինքեան յառաջ էին գալիս, այնուամենայնիւ նոքա դրանց գնահատումէին որպէս միջնորդական բարիքներ, որ իրենց արժէքը ստանումէին մի բացարձակ արժէք ունեցող բարւոյ և գեղեցկի վերաբերմամբ։ Մարմնամարզութեան նոյն ինքն առարկայական նպատակն, այն է, կեանքի մէջ գործադրուած մի քանի վարժութիւնների ընձեռումն, որ Յունաստանի ազգային կեանքում շատ մեծ նշանակութիւն ունէր և դա ստորադրուած էր մարմնամարզութեան անհատական նպատակին, մարդու մարմնական և հոգեկան ներդաշնակ զարգացմանը, որի հիմքն է բարութիւնն ու գեղեցկութիւնը։

Յունաց ազգից յետոյ ոչ մի ազգ մարմնամարզութեան այս վսեմ նպատակը ըմբռնած չէ, նոյն իսկ հին կուլտուրական (քաղաքակիրթ) ազգերից երկրորդը, հռովմայեցիք, որոնք խնամումէին առողջութիւնն միայն պատերազմական նպատակի համար որով ներշնչուած էին։ Երկու հազար տարիներ անցան և մարմնամարզութեան վերայ միմիայն պէտք եղած միջոցին էին ուշ դարձնում, և այս կատարւումէր միմիայն մասնաւոր նպատակներով։ Առաջին անգամ (1793 թ.) ձայն բարձրացրեց յայտնի մարդասէր Գուտս Մութս իւր՝ մարմնամարզութեան համար դարագլուխ կազմող երկի մէջ ասելով «Թող մենք մարմնական կրթութեան աւելի ոյժ և զօրութիւն տանք, և թո՛ղ հոգւոյ և մարմնի ներդաշնակութիւնը լինի մարմնամարզութեան միակ, ճշմարիտ գլխաւոր նպատակն»։ Եւ այս երկասիրութիւնը որ կրում է անունս «մարմնամարզութիւն երիտասարդութեան համար», պէտք է համարել դարագլուխ։

Նոյնպէս «Մարմնամարզութեան աւանդման համար նոր ձեռնարկ՝ Պրուսիայի ժողովրդական ուսումնարաններում» 1868 թ.ից խօսումէ «մարմնամարզութեան» նպատակի մասին կարճ և ազդու խօսքերով, այնպէս որ նա գեղասիրականը իբրև նպատակ՝ նախադասումէ, իսկ ֆիզիքականը ինչ-

պէս միջոց՝ յետադասում։

Բարութեան և գեղեցկութեան այդ վսեմ վերջնական նպատակներն, իրենց կատարելութեամբ գերականներ (Ideale) են, որոց մարդ ձգտումէ և որոնց քիչ թէ շատ մերձենալ կարող է, բայց ոչ երբէք կատարելապէս հասնել, որովհետև մարդը դէպի կատարելութիւնը ձգտելով մի անվերջ ճանապարհի վերայ է, և երբէք նորա ծայրին հասնելու չէ։

«Թէև կատարելութիւնն մի նպատակ է, որ խուսափումէ
«Բայց պէտք է միայն դրան ձգտել, թէև անհասանելի է»։

Նոյնպէս և մարդու ամբողջ կրթութիւնն իւր բոլոր միջոցներով, ծառայումէ այդ գաղափարին։

Այժմ տեսնենք թէ մարմնամարզութիւնն այդ գերակայի (Ideal) իրագործման համար, ինչ տեսակ միջոցներ է տալիս։

I

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Մարմնամարզութիւնը նախ իր կողմից նպաստումէ բարոյականութեան, իսկ ամբողջ բարոյականութեան էութիւնն ու բովանդակութիւնն է՝ բարութիւնը, որի սկիզբը կամքի մէջ պիտի որոնել, և դա երևան է գալիս միմիայն մասնաւոր կամքի՝ մի այլ կամքի հետ ունեցած յարաբերութեամբ, ուստի և պարզ է որ կամքի բոլոր կրթութիւնը ուղղակի թէ անուղղակի կերպով պիտի կայանայ բարոյական կրթութեան մէջ, և այս այն չափով կարող է լինել, որչափ որ կամքը իւր մէջ պարունակումէ անմիջապէս բարի կամ սկզբնական աստիճաններ՝ բարոյականութեան համար. բարոյականութեան այդ սկզբնական աստիճաններն, որոնք բարոյապէս անտարբեր դէպքերի և բացարձակ բարոյական կամքի յարաբերութիւնների մէջ միջին տեղ են բռնում, մենք կանուանենք ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ, որոնց Հերբարտ—Ցիլլերական մանկավարժութիւնը «կառավարութեան» միջոցով աշխատումէ ձեռք բերել. իսկ կամքի այն ձևերն, որոնց բարոյական վճիռն անմիջապէս և անպայման «բարի» ստորոգելին է տալիս՝ առաջիններից զանազանելու համար կանուանենք ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ։

Ա. Միջնորդական առաքինութիւններ.

1. Ուշադրութիւն.

Միջնորդական առաքինութիւններից առաջինն է ուշադրութիւնը, որ զարթնում և խնամվումէ մարմնամարզութեամբ։ Աշակերտը՝ այստեղ քան թէ միւս ուսուցման ժամին աւելի հարկադրուած է աչքերն ու ականջներն սուր պահել, իր առջև կատարուած վարժութեան վերայ ուշք դարձնել և ականջը ուսուցչի տուած հրամանի համար սրած պահել, որպէս զի պէտք եղած վարժութիւնը ճշտութեամբ և առանց դանդաղելու

կատարէ։ Նորա անուշադրութիւնը պարզ՝ կարտայայտուի նորա թողած՝ կամ դանդաղ կատարած շարժողութեամբ, որով աշակերտը ուսուցչի տհաճութեան և իւր ընկերակիցների սաստիկ ծիծաղին կենթարկուի։ Մարմնամարզական խաղերի մէջ եթէ որ և է անձն յաղթող է հանդիսանում, այդ նորա ուշադրութեան պէտք է վերագրել. և այն ժամանակ նորա ընկերների ճանաչող վճիռն նրան բարձրացնում է ու շարունակ կատարելագործուելու գրութեան մէջ պահում. իսկ եթէ այդ միջոցին խաղը նորա անուշադրութեան պատճառով անյաջող է անցնում, այն ժամանակ ենթարկվում է իւր ընկերների տհաճութեանը, և ինչպէս այն՝ նոյնպէս և այս դէպքում՝ նրանց գովասանքն ու նախատինքը մի նշանաւոր խթան են դառնում ուշադրութեան համար։

Մի աղդարարական հրամանով (մարմնամարզութեան մէջ միմիայն նրա անունը յիշելով) աշակերտի մէջ կզարթնեն արդէն առաջուց աւանդած իւրացուցանող մտապատկերները, որոնք մարմնամարզի կամքով ղեկավարուած ու գալիք հրամանի կատարուելու մի մասի բովանդակութեանը ուղղուած. և, հէնց որ մի կատարողական խօսք է հնչում. իսկոյն վերայ են հասնում և նրանց անփոփոխ իրենց մէջ առնում և այս գործով հանդէս են դուրս բերում, և հրամայուած շարժողութիւնը կարողանում են գլուխ բերել։ Այսպիսով յառաջանում է կամաւոր ուշադրութիւնը որ մարմնամարզութեան մէջ զարթնում և վարժւում է։ Աշակերտը նախընթաց մարմնամարզական վարժութիւնների միջոցով հաւաքում է իւր մէջ մտապատկերների պաշար, որին մենք որպէս ընձեռած խոհականութիւն (Intelligenz) նշանակել կարող ենք։ Այս ինքնըստինքեան ուղղւում է նոր իւրացնող մտապատկերներով, և աշխատում է նրանց այնպէս իւր մէջ ընդունել, որ ի ներքուստ նոր զարգացումներ յառաջ գան։ Օրինակ, եթէ աշակերտները, բոլոր այն շարժողութիւնները, որոնք թևերի ազատ վարժութիւններով են կատարւում և վարժւում՝ առաջուց իւրացրած են, և եթէ այնուհետև ուսուցիչը մի բարդ շարժողութիւն ևս անէ դրանց հիման վերայ, այն ժամանակ առաջուց իւրացրած մտապատկերները, որպէս ընձեռած (Intelligenz) խոհականութիւն, աշխատում են նորան այնպէս տիրապետել, որ ինքն իրան մի բարդ շարժողութիւն է յառաջ գալիս։ Սրանով մենք ստանում ենք ուշադրութեան մի երկրորդ ձև, այն է ակամայ ուշադրութիւն, կամ որ նոյն է հետաքրքրութիւն, որ բոլոր կրթութեան ամենանշանաւոր լծակն է։

2. Հնազանդութիւն.

Հնազանդութիւնը ուշադրութեան՝ մանաւանդ կամաւոր ուշադրութեան հետ սերտ կապուած՝ է և կազմւում է միաժամանակ նրա հետ միասին և նրա միջոցով։ Դա է ուսուցչի հրամանի յօժարաբար կատարումն, այսինքն մի ուրիշի կամքին անպայման հպատակութիւնը։ Աշակերտը առանց ուսուցչի

կամքին հակառակելու, սովորում է իւր կամքը մի ուրիշի կամքին ստորադրել և այնպիսի ճշտութեամբ կատարել, կարծես թէ իւր սեփական կամքը լինէր։ Անձնատուր լինելու այս ձևը, այսինքն նորա կամքի ինքնակամ ստորադրութիւնը մի լաւագոյն և արժէք ունեցող կամքի՝ այնպէս չէ՝ ինչպէս որ այս ներքին ազատութեան մէջ տեղի է ունենում՝, որովհետև ընդօրինակութեանը (Legalität) պակասում է ներքին ազատութեան մի երկրորդ նշանաւոր վայրկեան, այն է օրինակելի կամքի բացարձակ արժէքի մասին համոզմունք. սակայն օրինական հնազանդութիւնն ունի իւր նշանակութիւնն, որպէս միջնորդական առաքինութիւն, որովհետև առանց նորա չէ կարող մարդ այն կատարեալ և գերակայական հնազանդութիւնը ձեռք բերել, այն հնազանդութիւնն, որին Իֆիգենեան տէր լինելով կարող էր ասել. «Հնազանդութեամբ ես միշտ իմ հոգիս ամենից գեղեցիկ կերպով ազատ էի զգում՝» այն հնազանդութիւնն, որի կրօնական ձևն հաւատքն է, այն է ներքին ազատութեան հնազանդութիւն։

3. Արթնութիւն։

Աշակերտը մարմնամարզութեան միջոցին իւր միտքը ոչ թէ միմիայն ուշադրութեամբ ուսուցչի խօսքի վերայ պիտի դարձնէ և նորա հրամաններն հնազանդութեամբ կատարէ, այլ և նա պարտաւոր է ամեն վարժութիւնների մէջ ուշ դարձնել ճշգիւ դրքի, կեցուածքի կամ՝ վարժող անդամների շարժողութեան, և գործիքով վարժուելիս՝ գործիքի վերայ, որպէս զի մի ակնթարթում՝՝ կարողանայ գործիքը բռնելու ճիշտ տեղը գտնել, և գործադրուելիք ուժի կարևոր չափը գնահատել, մարմնամարզական գործողութիւնը կատարելիս մի քանի վտանգներ պարզ հայեացքով նախատեսել և նոցանից խուսափել, և ամեն մի բանում՝ մարմնի վայելուչ կեցուածքը աչքից չըփախցնել, որի կանոնաւոր և ուղիղ պահպանելուց կախումն ունի նորա գեղեցկութիւնն։ Հոգւոյ կազմութեան այն ձևն, որ ուշադրութիւնից զանազանուելով և ինքնապահութեան սկզբունքին հետևելով, վարժութեան միջոցին առաւել խուսափող՝ քան դէպ ի կատարելիք գործողութիւնն է ուղղուած, կոչւում է արթնութիւն։ Ուշադրութիւնն հարցնում է. «Ի՞նչ պիտի անել». իսկ արթնութիւնն՝ «Ինչից պիտի խուսափել»։ Առաջինը ուղղուած է դրական՝ իսկ վերջինը բացասական գործողութեան վերայ, սակայն երկուսն ևս ձեռք ձեռքի տուած պիտի ընթանան։ Եթէ կայ մի որ և է առարկայ աշակերտին մի արթուն և բաց աչք տալու համար, այդ պիտի լինի մարմնամարզութեան ուսուցումն, որովհետև, այստեղ աշակերտը նկատելով մի քանի վտանգներ հարկադրուած է լինում ի սէր իւր կեանքի միշտ արթուն և աչքաբաց մնալ։

4. ԿԱՐԳ.

Ուշադիր, հնազանդ և արթուն աշակերտը մարմնամարզութեան մէջ շուտով կնկատէ թէ ինչպէս ամեն վարժութիւններ որոշ ժամանակին մի անփոփոխ կարգով են կատարւում՝, և եթէ նա նոյն րոպէին—գուցէ ոչ

երբեք չի կարողանայ իւրն հաշիւ տալ վարժութեան յատուկ բնաւորութեան վերայ հիմնուած անդրդուելի յաջորդականութեան օրէնքի մասին, գոնէ սովորութեան միջոցով հաստատուելով նորա մէջ այդ կարգը՝ կարող է նորա մէջ մի տեսակ (Disposition) յարմարումն այդ կարգին կազմակերպուել։ Երբ աշակերտը տեսնումէ, որ մարմնամարզութիւնն այնչափով ուրախ և թարմ է իւր գործը տեսնում, որչափ որ թէ մասնաւորի և թէ ընդհանուրի մէջ կարգ է տիրապետում, այն ժամանակ նա կարողէ նորա նշանակութիւնն մարմնամարզութեան համար ըմբռնել և դրանից ուրախութիւն ստանալ. և ինքն ևս իւր կողմից կաշխատի այդ գեղեցիկ կարգ ու կանոնը ճշգիւ պահպանել։ Ըստ այսմ մարմնամարզութիւնն կարգաւոր և օրինական վարժութեան մէջ և թէ ամբողջ մարզական տեղի վերայ կանոնաւորուած կազմութեան մէջ յառաջ է բերում աշակերտին կարգի մի օրինակելի պատկեր նրան սովորական վարժութեամբ դորան ընդունակ է դարձնում կարգաւորութեան գաղափարի համար. և բաց է անում մտաւոր աչքերն նորա թէ մասնաւոր և թէ ընդհանուր նշանակութեան համար, և այսպիսով կազմումէ նորա այդ ձևական առաքինութիւն, որ նորա թէ բարոյական զարգացման (մանաւանդ ներքին ազատութեան գաղափարի համար) և թէ գեղասիրական ճաշակն կազմակերպելու վերաբերմամբ բարձր նշանակութիւն ունի։

5. Արիութիւն, խոհեմութիւն և համբերութիւն.

Նպատակայարմար ընտրուած և կանոնաւոր կատարուած մարմնական վարժութիւնները նպաստումեն մարմնի զարգացման և զօրեղացնում են առողջութիւնը, նոքա բազմացնումեն մարմնի ուժը և բարձրացնումեն տոկունութիւն և ճարպկութիւն անդամների գործածութեամբ։ Այն վարժութիւններն, որոնք աշակերտին սկզբում անհնարին և դժուարին էին երևում, ժամանակի ընթացքում կարող է նա հեշտութեամբ և առանց մի որ և է փոքր վտանգի կատարել, որով նա պարզ նկատումէ իւր ուժի աստիճանաբար մեծանալն, նա տեսնումէ, որ իրեն երևացած անհնարինը յիրաւի որ անհնարին չէ եղած և վտանգաւորը նորա աչքին դառնումէ անվտանգ. և մարդ այնչափով աւելի մեծ կլինի, որչափով որ նա ինքն իրեն և իւր ոյժերն ճանաչումէ։ Տուէք մարդուն այն բանի մասին գիտակցութիւն, թէ ինքն ինչ է. և նա շուտով կը սովորի թէ ինքն ինչ պիտի լինի։ Հարկաւոր է միայն, ամեն մի վարժութիւն թեթևագոյն վարժութիւններով աստիճանաբար նախապատրաստել, նորերի վտանգաւոր երևացած կողմն պարզապէս աչքի առջև ունենալ, սրտոտութեամբ նրանց մերձենալ և նրանց ամենայն հանգստութեամբ և վստահութեամբ յաղթահարել։ Այսպիսով նա սովորումէ իւր ուժը գնահատել և գիտէ թէ որ աստիճան ինքն իրեն վստահ կարող է լինել։ Նա եթէ մի ծանր վարժութեան է հանդիպում և կամ թէ կեանքը նորան մի որ և է տեսակէտից պահանջողութիւն է առաջի դնում, որի կատարումն նորա համար առանց վտանգի չէ, իսկոյն կարող է մի վայրկենում նախատեսել, թէ արդեօք այդ խնդիրն

իր ուժին համապատասխան է, թէ իր ուժից վեր է, առաջին դէպքում նա արի է դառնում աշխատամէ պահանջը ճշտութեամբ կատարելու համար, չնայելով որ ուրիշները չեն վստահում և գործին ձեռնարկել, իսկ վերջին դէպքում նա յամառ է դառնում և նոյն իսկ այն փորձից, որի անյաջողութեան մասին ինքն համոզուած է, յետ է կենում։ Նա իսկոյն և եթ չէ սարսափում, եթէ որ տեսնում է, որ ինքն իր ուժերի ամենամեծ լարման միջոցին իր ձեռնարկութեան յաջողականութիւնն կասկածաւոր է երևում. այլ նա իր ուժի վերայ վստահանալով և բարոյական նպատակին անձնատուր լինելով, որին աստուածային աջակցութիւն երբէք չի պակասում, գործի կատարման է դիմում,—և ահա, այդ է արիութիւնը, իսկ նորա միւս կողմն, այն է իր ուժերը վտանգալից խնդրի դէմ ուղիղ և ճիշտ կշռելուց զկնի երբ յետ է կենում, է մտածողութիւն։ Արիութեան և մտածողութեան համար շատ կարճ ժամանակ է պէտք, որ յերևան գան, վերջնական նպատակը պահանջում է մի շուտափոյթ վճիռ վճռողաբար գործող սիրտն է միայն անուան արժանի, և միայն վճռողաբար յետ կենալու մէջ է երևում մտածողութիւնը։ Այսպէս, մարմնամարզութեամբ զարգանում են արիութիւն մտածողութիւն և վճռականութիւն միևնոյն ժամանակում, որոնք այնպիսի սերտ կապով իրար հետ միացած են որ նրանց դժուար է միմեանցից անջատել։ «Ով որ շուրջը նայում է առողջ զգայարանքներով, առ Աստուած ապաւինում և ղեկավարող ուժի վերայ վստահանում, նա թէ իրեն և թէ ուրիշներին ամեն մի վտանգից և կարիքից ազատում է և մինչև անգամ նորա վերայ ընկած լեառն նրան չի սարսափեցնում։

Բ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մարմնամարզութեամբ ձգտուած առաքինութիւնների նշանակութիւնն ինչքան էլ մեծ լինի թէ անհատի և թէ համայնքի համար, այնու ամենայնիւ նոքա, բարոյական տեսակէտից նայած, միայն մի միջնորդական արժէք ունին և այս այնչափով, որչափով որ մարդ միայն նրանց միջոցով կարող է իր սկզբնական կոպտութիւնից դուրս գալ, և նոքա այնուհետև դառնում են հիմունքներ և անցորդական աստիճաններ անմիջական լիակատար արժէքի համար։ Նրանց միջոցով սանիկը այնքան բարձրացրած կլինի, որ նրա մէջ բացարձակ բարոյական սկզբունքը առ սակաւ սակաւ կազմակերպուելն կարող է սկսուել. Մենք այդ տեսակ բարոյական սկզբունք գտնում ենք կամքի ուժեղութեան ներքին ազատութեան, բարեացակամութեան, իրաւունքի և հատուցման բարոյագիտական գաղափարներում։

1. Կամքի ուժեղութիւն (կատարելութիւն).

Մարմնամարզութիւնն անմիջական նպաստ է տալիս նա և այդ սկզբունքներին, որով նա ամենից առաջ մարմնի ուժը մեծացնելով կամքը զարթեցնում և զօրեղացնում է։ Եթէ աշակերտը վարժութիւնների մէջ մի քանի դժուարութիւնների յաղթելով սովորումէ որ այն բաներն, ինչ որ սկըզ-

բում՝ անհնարին է, այժմ հասանելի են գտնում և հնարաւոր, այդպիսով նորա մէջ զարթնումէ դէպի նոր վարժութիւնները ցանկութիւն՝ կապուած նրանց կատարել կարողանալու գիտակցութեան հետ, և ցանկութեան այս ձեն է կամքը։ Այդպէս զարթեցրած կամքը, այն է «գործնական գիտակցութիւնը կարողանալու մասին» յայտնւումէ նախ արտաքուստ այն արարքի մէջ, որով նա իր ձգտած առարկայի իրականացումն է աշխատում։ Եթէ այդ փորձը յաջողւում է, այն ժամանակ նա վերստին կրկնելի է գտնում և այդպիսով եւ նոր բարդութիւնների համար յառաջացնումէ մի տեսակ կամեցողութիւն որով միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, թէ մի զօրեղ կամք ինչ կարող է գործով անել։—Բայց առաւել նշանաւոր է կամքի գործողութիւնը ի ներքուստ՝ մաքերի հոսանքներին իշխելու և կառավարելու, ուշադրութեան և դատողութեան մէջ։ Մարմնական ուժի համեմատ եւ սկսումէ կամքի ուժգնութիւն աւելի և շատանալ. կամաւոր ուշադրութիւնն եւ շարունակ վարժութիւնների միջոցով ակամայից, ազատ հետաքրքրութեան (Interess) է փոխվում, այդպիսով մարզւող սանիկը իւր կամքի կազմակերպութեան մէջ գտնվումէ բարոյական առաջին սկզբունքի, կամքի ուժգնութեան գաղափարի, կամ կատարելութեան մերձեցնող ճանապարհի վերայ։

2. Ներքին ազատութիւն.

Սակայն չը պէտք է երկիւղ կրել, որ մարմնամարզութիւնն կամքի կազմակերպութիւնը միակողմանի կըկատարէ, որով նա միայն կամքի ամենամեծ չափը կըձգտէ և յետոյ յարմար դէպքում նրան սանձարձակ կըթողնէ, կամ թէ գուցէ այդ սկզբունքը մանաւորապէս շեշտելով, այնպիսի մարդիկ կըպատրաստէ որոնք իրենց կամքից զատ ուրիշ մի որ և է հեղինակութիւն չեն ճանաչել։ Սանիկի կամքին հանդէպ է գալիս ուսուցչի կամքը և պահանջում է լիովին և անպայման առաջադրութիւն, բայց ուսուցիչն եւ իւր կողմից պիտի հոգս տանի, որ իւր կամքն էլ անմիջական արժէք ունենայ, որպէս զի աշակերտն նորա կամքին առաջադրուի. օրինական հնազանդութիւն, որին սանիկը միայն պիտի հետևի, որովհետև արտաքին հանգամանքներ նորան հարկադրում են, փոխւում է նորա կամքի գիտակցական և ինքնակամ հպատակութեան՝ ուսուցչի (որպէս արժէք ունեցող ճանչուած) կամքին, իսկ ուսուցիչը այդպիսով կըբարձրացնէ իւր աշակերտին օրինական հնազանդութեան միջնորդական աստիճաններից դէպի բարոյագիտական երկրորդ սկզբունքը, այն է ներքին ազատութեան գաղափարը։

Մարմնամարզութեան տեղի վերայ, ուր մի և նոյն ձգտումով ամենքը միացած են, և մարմնամարզական խաղերի միջոցին ուր միւս դաստիարակութեան ժամերին տիրապետող ճնշումն այլ եւս նրանց վերայ չէ գործ դրւում, և դրանք առանց մի որ և է ճնշում մի ազատ շարժուել կարող են, հետևաբար ուսուցչին աւելի բաց կերևան և նրան աւելի կըմերձենան քան թէ մի որ և է այլ դէպքում. այդպիսով գտնումէ ուսուցիչը բազմապատիկ դէպքեր՝ նրանց իրանց իսկական գոյնով նկարել և իւր եռանդագին մասնակցութեամբ

և որդիական սիրով նրանց մէջ եղած կապը ամրապնդել. նա է նրանց առաջնորդն ու խորհրդատուն, նա է նրանց աչքի առջև ամենամեծ դատաւորը նրանց փոքր, բայց նշանաւոր վէճերի վերաբերմամբ, նա է միևնոյն ժամանակ նրանց ընկերը և նախապատկերը, և նրա կամքը՝ ամենաբարձր հեղինակութիւնը, այս պատճառով պէտքէ ուսուցիչը հոգս տանէ, որ ինքն մի օրինակելի նախապատկեր, մի բարոյական բնաւորութիւն լինի. նրան աւելի մօտից է տրուած քան մի որև առարկայի ուսուցչի, սաներին առաջնորդել դէպի ներքին ազատութեան գաղափարը, որի մէջ նոքա նորա կամքի բացարձակ արժէքը ճանաչելուց զկնի, աշխատեն նրան իրենց սեփական դարձնել և նրան նմանել.

3. Բարէացակամութիւն.

Ինչպէս որ արդէն ասուեցաւ, աշակերտը մարմնամարզութեան մէջ ոչ թէ միայն ուշադիր և հնազանդ պիտի լինի, այլ մի քանի գալիք վտանգների մասին ևս ուշք դարձնի, որոնք վարժութիւնները թերի կատարելուց կարող են յառաջ գալ, սակայն արթնութեան միջոցով կարելի է դրանցից դիւրաւ խոյս տալ. իսկ եթէ այդ առաքինութիւններն չբաւեն վտանգի դէմ ապահովուելու համար, այն ժամանակ պէտք է որ ուսուցիչը աշակերտին օգնութեան հասնի, դանդաղ աշակերտին սիրտ տայ, բաւական նախապատրաստուած և վստահ կատարելի վարժութիւն նորից անել տայ, և պէտք եղած միջոցին ինքն ևս անձամբ նորան օրինակով ցոյց տայ. Եթէ այդ օգնութիւններն միևնոյն ժամանակ շատ տեղերում պէտք են, ինչպէս որ այս տեղի կունենայ, երբ շատ աշակերտներ իմիասին մանաւանդ գործիքով վարժուելիս վարժութիւններ պիտի անեն. այսպիսի դէպքում ուսուցիչը պէտք է որ աշակերտներից փոփոխակի իրեն օգնութեան կանչի. որոնք առ ժամանակ իրենց ուսուցչի հսկողութեան տակ նոր ուսուցչի դեր են կատարում և իրենց ընկերակիցներին անելիք վարժութիւնը բացատրում և օրինակով ցոյց տալիս. Եթէ մի աշակերտ դանդաղի մի որ և է վարժութիւն կատարելիս և նրան այդ դժուարին և դրա հետ կապած վտանգը այնպէս մեծ երևայ, որ նա անյաջողութիւնից երկիւղ կրէ, այն ժամանակ նորա ընկերակից ուսուցիչները կաշխատեն ամեն կողմից նրան քաջալերել և արիացնել, նոյնը վերստին փորձել տալով, եթէ էլի անյաջող անցնի, նոքա միևնոյն վարժութիւնն իրենք նորա առաջ կը կատարեն և ցոյց կը տան թէ ինչքան հեշտ է այդ անել, խոստանալով միևնոյն ժամանակ որ գործողութիւնն անելիս միշտ նրան աջակից կլինեն, որպէս զի նա ոչ մի վտանգ չը կրէ որանից յետոյ. նա միանգամ ևս փորձում է և ահա փորձը յաջողւում է. որի յաղթանակի վերայ թէ ուսուցիչը և թէ աշակերտները միակերպ ուրախանում են. Միևնոյն սիրալիր անձնատուր լինելն, համբերութիւն և քաջալերիչ խոստմունքներն կատարուում են միւս աշակերտի վերաբերմամբ և կրկնւում են ամեն մի նոր վարժութիւն անելու միջոցին. Այդ երիտասարդ ժամանակաւոր ուսուցիչներն իրենց ամեն ջանքը

կը թափին և ամէն տեսակ միջոց գործ կը դնեն. որպէսզի իրենց ընկերակիցներին մի որ և է կերպով նպաստեն և յառաջ տանեն, որով նոքա շատ անգամ իրենց աշակերտներից առաւել պատրաստած կլինեն. չընայելով որ իրենց մարմնամարզական վարժութիւններին ևս ոչինչ նոր բան չեն աւելցրած, նոքա այդ միջոցին իրենց անձնական շահը բոլորովին աչքից թողած են և անձնուրաց բոլորը խմբովին ձգտումեն միևնոյն բարի նպատակին, այն է, որ իրենց ընկերակիցն ևս կարողանայ իրենց չափին և աստիճանին հասնել, որն իր վարժուած ընկերակիցների անձնազոհութեամբ և աշխատութեամբ յառաջ գնալով, ինքն ևս իր կողմից կաշխատի այդ բանի մէջ կատարութիւն ունեցող ընկերակիցներին միևնոյն ուրախութեամբ և անձնուրացութեամբ օգնել. Ահա, այդ է բարոյական բացարձակ ձգտումն, դա է ամենափայլուն և ամենազնիւ մարգարիտը առաքինութիւնների պսակի մէջ, մէկ խօսքով դա բարեացակամութիւն և մի մաքուր սէր է, որն (Կորնթ. 13) «սիրոյ այն բարձր հոգի համաձայն, ոչ մի ուրիշ բարիքով նոյն ինքն բոլոր բարիքների գումարով կշռել անհնարին է».

4. Հանրա-միտ (Gemeinsinn).

Կամքի ուժղնութեամբ և ներքին ազատութեամբ մարմնամարզութիւնը տալիս է սաներին այնպիսի առաքինութիւններ, որոնք ամենից առաջ նորա անձնական, բարոյապէս կատարելագործման համար արժէք ունին, իսկ բարեացակամութեան միջոցով, որն իսկապէս առարկայական բնաւորութիւն ունի, նորա բարոյական կեանքը աշխարհի հետ անմիջական յարաբերութեան մէջ է մտնում, այնտեղ աշխատում է նա որքան հնարաւոր է մեծ չափով իր կամքը կազմակերպել և օտար կամքը իրեն սեփականացնել, սակայն այստեղ նա իր կամքը օտարի է փոխանակում և ձգտում նրա յօգուտ ուրիշի լիովին անձնուրացաբար կատարել. Մարզական տեղի վերայ այդ առաքինութիւնը աւելի պայծառ կը զարգանայ, որքան որ նա մի կողմից համակրութեան հիման վերայ կսկսի բարձրանալ, որն դասարանների, կարգերի, պարապմունքի և ձգտումների հաւասարութիւնից յառաջ կը գայ, և միւս կողմից մարմնամարզութեան մէջ գործադրուելու դէպք է գտնում. Միմիայն գործով ապահովուած առաքինութիւնն է ինքն ըստ ինքեան ուժեղ և կեանքի ընդունակ, հէնց դրա համար են մարմնամարզական խաղերը, ինչպէս առհասարակ պատանեկական խաղերը, նշանաւոր, որովհետև նոքա ոչ թէ միայն գործունէութեան դրդումն գոհացնում և սիրտ գործունեայ գրգռման մէջ են պահպանում, այլ և այնպիսի առաքինութիւններ են զարթեցնում, որոնք երբէք ուսումնարանական նստարանի վերայ չեն յառաջանար. Ուրաքանչիւր մարզական խաղում, ասում է Յոլհան, «կա է գալիս մի աշխարհ. Նրանց մէջ ապրում է մի ընկերական ուրախ, կենսատու յառաջխաղացման կռիւ, այստեղ աշխատանքը հաճոյքի հետ ընկերանում ու լրջութիւնն ուրախութեան հետ. այնտեղ երիտասարդութիւն սովորում է փոքր ժամանակից միմեանց հետ հաւասար իրաւունքով և օրէն-

քով վարուել, նա այնտեղ սովորոյթներ, գործածութիւններ, վայելուչ կերպով վարուելու եղանակը և ճարպիկութիւնը կենդանի օրինակների և վարժութիւնների մէջ է տեսնում։ Իւրաքանչիւր միայնակեաց աշակերտ շատ դիւրաւ եսասիրութեան մէջ է ընկղմւում. նա չունի նոյնպէս մի հայելի՝ որի մէջ իրեն իսկական կերպարանքով նայի, նա չունի մի դատական կշիռ՝ որով իւր ուժի մեծութիւնը և անձնական արժէքը կշռէ, մէկ խօսքով ոչ մի ուսումնարան՝ կամքի և գործի համար»։ Այսպէս ուրեմն, մարզական տեղի վերայ աճումէ կեանքը կեանքի յետեւից, ինչպէս բոցը բոցի յետեւից, մանուկները տարիներով կարող են ուսումնարանական դասընկեր լինել և սակայն միմեանցից օտար մնալ, բայց խաղակից ընկերն ամեն մինի սրտի հետ է աճում, մինչև անգամ ծերութեան հասակում մարդ ա՜խ քաշելով է մտաբերում իւր պատանեկութեան խաղակից ընկերներին։ Փոփոխուող խաղերի, ինչպէս կարգերի և շարքերի վարժութիւնների մէջ, ուր իւրաքանչիւրին մի որոշ տեղ է տուած, այնպէս որ ամբողջութիւնը երբէք չըխանգարուէր, սովորում է աշակերտը իւր եսը մերթ առջև շատ թէ քիչ մոռանալ, միևնոյն ժամանակ նորա նշանակութիւնն ամբողջութեան համար բոլորովին աչքի չըթողնելով։ Ամբողջ մարմնամարզական գործողութիւն ներկայացնում է մի լաւ կազմակերպուած հասարակութիւն իր մեծաւորներով (Vorgesctze) և ստորադրեալներով, ամբողջութիւն՝ կարգերի, և ամեն մի կարգ խումբ՝ շարքերի է բաժանուած, որոնք իւրեանց առանձին ուսուցիչը և առաջնորդը ունին. իսկ ամբողջ հասարակութեան գլուխն ուսուցիչն է. այստեղ են պատահում հասարակական դէպքեր և պարտաւորութիւններ, որոնց ամեն մի աշակերտ պիտի հպատակուի առանց իւր հայրական ծագմանն ուշք դարձնելու, այստեղ են լինում զանազան կարգեր և աստիճաններ, որոնք միայն ընդունակների համար հասանելի են դառնում, այստեղ են լինում սկսած նորավարժ ուսուցչից մինչև վարպետը միջոցներ, տարածութիւններ և հասարակական դէպքեր կանոնաւորելու համար. այստեղ է պատահում, որ իւրաքանչիւրն իւր մատուցած ծառայութեան համեմատ արժէք ունի. այստեղ — և մանաւանդ կարգերի վարժութիւնների մէջ, ուր մի ամբողջ խումբ մի մարդու պէս է շարժւում սովորում է, ամեն մինը ամբողջութիւն դիւրաւ և ուրախ ստորադրուել։ Մարմնամարզական հասարակութիւն (Գ. դասատուն կամ ամբողջ ուսումնարան) ոչ թէ հատ հատ աշակերտներից բաղկացած մի գումարն է ներկայացնում, այլ մի գործարանական ամբողջութիւն, և իւրաքանչիւր աշակերտը իրեն նայում է այդ հասարակութեան որպէս մի գործարանաւոր անդամ։ Ներքին ազատութեան սկզբունքին համաձայն նա ամբողջի կամքը իւր սեփականն է դարձնում, կամ որ նոյն է, ինքն ընդհանուրի ձգտած նպատակին է ստորադրւում, իսկ բարեացակամութեան սկզբունքին համաձայն նա իւր կամքը ամբողջովին ընդհանրութեան է նուիրում։ Խաղալով և մարզուելով մշակւումէ լուրջ կեանք և գործունէութեան եռանդն ընդհանրական նպատակների համար, որով հանրա-միտք (Gemeinsinn) զարթնում և արգանումէ, որն ներքին

ազատութեան և բարեացակամութեան հետ միանալով բոլոր բարոյական հասարակութեան հիմունքն է կազմում։

5 Հայրենասիրութիւն։

Հանրա-միտքը մի բարոյական կապ է, որն անհատներին մի հասարակութեան հետ է կապում և այն էլ մի բարոյական հասարակութեան հետ, թէ և այդ կապից զատ նաև կան այն սկզբունքներն, որոնց իրագործման համար անդամները միաբանած են, բարոյական են։ Սակայն բարոյական հասարակութեան կարող է զանազան ծաւալ ունենալ։ Նա ամփոփումէ իւր սկզբնական «աստուածատուր» յարաբերութիւնների մէջ նախ՝ մայր և զաւակ։ սակայն շուտով իւր կապանքի մէջ է առնում հօրը, եղբայրներին և քոյրերին, յետոյ տարածւումէ խաղակից ընկերների և նրանց ազգականների վերայ, շրջափակումէ հետզհետէ միևնոյն գիւղի, քաղաքի բոլոր բնակիչներին, իւր հասարակութեան մէջ է քաշում շրջակայք և ամբողջ նահանգ և վերջապէս՝ բոլոր մի կրօն ունեցող ազգութիւն և ապա մի լեզուով խօսող ազգութիւններ և դրանից էլ առաւել հեռու գնալով ամբողջ մարդկութիւն։ Մայրը իւր զաւակի առաջին աշխարհն է, նա (մայր) ամփոփումէ իւր մէջ նորա բոլոր զգացումները, նա էլ փոքր ինչ ուշ սովորումէ հօրը, քոյրերին և եղբայրներին և վերջիններիս հետ նոյնպէս իւր խաղակից ընկերներին սիրել։ Արդէն առաջուց ասուեցաւ, թէ ինչպէս պատանեկական խաղերի գաղափարը մարդուն իւր ամբողջ կեանքում առաջնորդում և մինչև անգամ ծերունուն խաղաղ յիշատակութեան մէջ ուժգին կաշկանդումէ։ Այս շատ բնական է, որ մանուկը ամենից առաջ այն տեղն է սիրում, ուր առ ծնողներն ունեցած սիրոյ մէջ նորա առաջին զգացումն հանգչումէ, այն տեղն, ուր նա ուրախ և զուարթ ծաղկած է, ուր հազարաւոր ուրախական հետքեր նրան շրջապատում են, ուր բոլոր աղբիւրներ ու ծառեր նորա համար ապրում են,» և ահա, այսպէս խաղատեղն էլ ոչ պակաս նշանակութիւն ունի ծնողական տնից սէր առ ծննդավայր զարթեցնելու համար։

Ծննդավայրն մի ընդարձակուած ընտանիք է, իսկ ընդարձակուած ծննդավայրն՝ հայրենիք։ Եթէ հոգւոյ և մարմնի ներդաշնակ աճումն մարդու կրթութեան համար մի նպատակաւ ազատ, գիւղակայական ինքնախաղ է, այն ժամանակ մարմնամարզութեան այդպէս ասած տարկայական կողմը էլ ունի իւր արժէք հայրենիքի համար ֆիզիքապէս զօրեղ և գործունեայ անդամներ պատրաստելով։ Մարդը, մանաւանդ երիտասարդութիւն հետեւումէ սիրով տարկայական նպատակներին, և ուսուցչի խոհուն գրգման ներքոյ նա իւր ոյժերն զարթեցնում և վարժեցնումէ հէնց նրա համար, որ նա միանգամ հայրենիքին, որին նա որպէս իւր ընդարձակուած ծննդավայրն սիրած է, կարիքի մէջ, ընկած միջոցին իւր հզօր բազուկը կարկառում է և նրան վտանգից ազատում է։ Եթէ որ մարմնամարզութեան հետ նուագածութիւն էլ կապւում է, ինչպէս որ Պլատոնը այդ պահանջում էր, այն է,

եթէ կարգերի և խմբերի վարժութիւններն իսկական, թարմ հայրենասիրական երգերով կատարուէին, այն ժամանակ աւելցրած ուժի զգացումը և երգերի հայրենասիրական ոգին չափի և ներդաշնակութեան միջոցով կենդանարար ազդեցութիւն ունէին ամբողջ մարդու վերայ, նորա սրտի ներքինը յափշտակում և նորա մէջ սէր առ հայրենիս զարթեցնում, այո՛, նրան կազմ և պատրաստ են կացուցանում մինչև անգամ իւր ամենասիրելին զոհելու համար, եթէ որ այդ՝ հայրենիքի բարիքը պահանջում է: Նոքա որոնք մարմնամարզական տեղերի վերայ երիտասարդական լի ուժի և արիութեան մէջ հայրենասիրական երգերով ոգևորուած քաջալերուած են, իւրեանց բոլոր ճիգը կը թափեն երկրի բաղդաւորութեանը պատիւն ու ազատութիւն պաշտպանելու համար, և եթէ հայրենիքը նրանց կանչէ, բոլորն ևս միևնոյն երգերի երգեցողութեամբ պատերազմի դաշտ կերթան: Միայն թող չը կարծէ ուսուցիչը, որ մարմնամարզութեան մէջ հայրենասիրական զգացումը զարթեցնելով ամեն բան արած է: Նա պէտք է այն բանի մասին ևս հոգայ, որ ազգային զգացումը նորա մէջ այնպէս չը զարգացնէ, որ վերջը ազգային ատելութիւն դէպի միւս ազգերն յառաջ գայ: Որովհետև ազգային ատելութիւնն մեզ անընդունակ է դարձնում օտար ազգերի գերազանցութիւններ ճանաչելու մէջ: Մի ճշմարիտ հայրենասէր կը սիրէ իւր հայրենիքը և կը յարգէ միւս ազգերի լաւ կողմերն: Նա հաւասարապէս է նայում օտարի առաւելութիւնների վերայ: Նա Ֆենելոնի հետ միասին կասէ «Ես ընտանիքը ինձնից առաւել եմ սիրում, հայրենիքս ընտանիքիցս, և մարդկութիւնն հայրենիքիցս» Նա Մոնտեսքիէու սկզբունքին համաձայն պիտի ասէ, «եթէ ես գիտենամ մի բան, որն ինձ օգտակար և իմ հայրենիքիս վնասակար է, ես իմ հոգուց այդ կը հալածէի: Եթէ ես մի բան գիտենամ, որն իմ ընտանիքիս օգտակար, իսկ հայրենիքիս ոչ, կաշխատէի այդ բոլորովին մոռանալ: Եթէ ես մի բան հայրենիքիս համար օգտակար գիտենամ, իսկ մարդկային ցեղի համար վնասակար, ես դորան որպէս մի յանցանք կը նայէի:

(Շարունակելի) Ս. Տէր Գաբրիէլեանց.

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒ
ԵՒ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

—

Գ. Փիլ. Վարդանեանի «Հոմերի Իլիականը»։

(Թարգմանութիւն, Աթենք Բ. Ժ.)

ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Ա. Աշխարհիկ լեզուի գլխաւոր առանձնայատկութիւններից մէկն է թուականների հետ եզակի դնելը։ Բոլորովին հակառակ է նոր լեզուի ոգուն ասել՝ վեց տներ, երկու խնձորներ, չորս աշակերտներ եւն։ Այլ պէտք է ասել. վեց տուն, երկու խնձոր, չորս աշակերտ։ Այս կանոնի դէմ է վարւում յաճախ պ. Վարդանեան։

Օրինակ՝

«Ինն թուականով գօտիներ (գօտի)։ 171. *«Որի վրայ քսան հազար փայլուն ծէրեր կային (ծէր) պղպջալով և ղուռ առիւծ։»* 131. *«Եօթն լնտիր աղջիկներ (աղջիկ) են տալիս քեզ եւ դեռ ուրիշ շատ գանձեր։»* 116 *«Երկու ատամներ (ատամ) կամենում էին կին առնել Թէտիսին»* 5.

«Բէովտացիք եկան յիսուն նաւերով (նաւով), որոնցից իւրաքանչիւրն (իւրաքանչիւրը) կրում էր հարիւր եւ քսան տղամարդէն ըլնելով։ «Արգիւացիք հասան յիսուն նաւերով» 15.

Իւրաքանչիւր ընթերցող մեր առածին համոզուելու համար թող մէկ բերէ ժողովրդական լեզուից օրինակներ։ Ոչ մի հեքիաթի մէջ չէ ասում՝ երկնքից երեք խնձորներ իջան այլ՝ երկնքից երեք կամ երկու խնձոր իջաւ։ Երկու հոգի սպանուեցան, բայց ոչ՝ երկու հոգիներ սպանուեցան։ Աշակերտը օրական չորս դաս ունի և ոչ չորս դասեր։

Դժբախտաբար մեծամասնութեան ականջը այնչափ սովորել է ծուռ և սխալ, խորթ և օտար ձևերի և գործածութեանց, որ ամեն այս տեսակ խընդիրներում նորից նոր պէտք է դիմել ժողովրդին, նորա լեզուին և նորա ոգուն։ Լաւագոյն համարուած մատենագիրներն անգամ, մեր վիպասաններն ու բանաստեղծները, մանաւանդ վերջին տարիներում, կարծես խօսք են տուել միմեանց մեր միակ և անգին հարստութիւնը, լեզուն, աղաւաղել և այլակերպել։

ԵՆ, ԵԼՈՒ

Բ. «Նա վճռեց մի բան անել իւր զաւակին փրկելու համար։ 17.

Այս օրինակից պարզ երևում է թէ ինչ մեծ տարբերութիւն կայ երկու

ձևի մէջ. վճռեց մի բան անել, բայց ոչ անէլու, գնաց փրկելու, բայց ոչ փրկէլու. Սակայն պ. Վարդանեան միշտ այսպէս ուղիղ չէ գործածում. Այլ. թերևս անհոգութեամբ թէ անզգուշութեամբ, խառնում և շփոթում է այդ զանազան ձևերը. որով և ստացւում է շատ անգամ այնպիսի énormité, ինչպէս ասում են ֆրանսացիք, որ մարդ չէ ուզում աչքերին հաւատալ.

«Ոչ ոք նրան չէր կարանում*) (կարողանում) բռնէլու։» 208.

Այսինքն բռնել. Եթէ բռնէլու, ուրեմն և ներելի է ասել. ես չեմ կարող հաց ուտէլու, դու չես կարող ջուր խմէլու։ Աշակերտը չէ ուզում դասը սերտէլու։ Նա չէ ուզում ուղիղ գրէլու ևլն.

Բերենք մի քանի օրինակ պ. Վարդանեանից.

«Ոչ ոք նրան չէր կարանում բռնէլու։» 208 «Սառաց և յուխկ ակնարկեց Պատրոկլէսին՝ ալևոր Փինիքսի համար լաւ անկողին պատրաստէլու (պատրաստել)։» 115

«Հայրդ ինձ հրամայել էր քեզ հետ այս տեղ ուղարկէլու (ուղարկել)։» 113

«Տրոյացիք դռներից անգամ չէին իշխում դուրս գալու։» 82

«Ուստի նա վերջապէս յանձն առաւ կանչէլու (կանչել) իւր սիրասուն աղջկան՝ դիցուհուն զոհ նուիրելու պայմանով։» 17

«Թէ սրբազան էր նշանել Նփիգէնիային քաջամարտիկ և աստուածանման Աքիլլի հետ, որ իբր թէ չէր կամենում մասնակցէլու արշաւին»։ 17. ևլն. ևլն.

Անհաճոյ և անճաշակ գործածութիւնը այնչափ յաճախ կրկնւումէ մեր ընթացիկ մատենագրութեան մէջ, որ այս և նման խորթութիւնները մեծամասնութեան համար սովորական են դարձած և մնում են աննկատելի. Բայց ինչ բանի արժէք չէ կարելի վարժուել. Մեր ընդհանուր կազմուածքը կործանիչ թոյներին էլ է վարժւում, ո՛ւր մնաց ականջը։ Սակայն լեզուի ուղիղ գործածութիւնը միայն ականջի խնդիր չէ, այլ մտաւորական մտածութեան նշանակ է։

ՅԵՏ ԵՒ ՅԵՏՈՅ.

Գ. «Երևելի արդէն բան է, որ Տրոյացիք յետ քաշուին։ Յետոյ դու կզղջաս, եթէ այժմ մեզ չօգնես։» 108.

Այս օրինակում պարզ երևում է յետ—ի և յետոյ—ի տարբերութիւնը. Որիշ տեսակ է գրաբարի մէջ։ Յետ գրաբարի մէջ գործ է ածւում մասնաւորապէս աշխարհաբարս յետոյ—ի մաքով։ Յետ յարութեան—յարու-

---

(*) Կարեմ բառը ժողովուրդը սովորաբար կարող եմ-ի տեղ է գործ ածում, իսկ տեղ տեղ կարեմի տեղ կարողանալն են գործ ածում. կարանում եմ հնարաւոր ձև է՞ խմբ.

թիւնից յետոյ։ Յետ կործանելոյ զդժոխս—դժոխքը կործանելուց յետոյ։

«Ինձ կուռի պաշտից յետ պաշտօն աստուածային պատուէրը չէ» 142։ «Երանի թէ այդ մեր քաջակորով ընկերները կենէին, և պեղաբաշ նժոյգներով յետ գային» 130։

Այս երկու դէպքում՝ յետը գործ է ածուած իր տեղում՝, բայց շատ անգամ Պ. Վարդանեան յետը դնում է յետոյ—ի փոխանակ. թերևս գրաբառի ազդմամբ, որ բոլորովին անտեղի է։

«Յուղարկութեան (յուղարկաւորութեան) հանդէսից (հանդիսից) յետ»․ այն է յետոյ։ 261.

«Զրահաւորելուց յետ՝ (յետոյ՝) պարձեալ յէշեց իւր մտերմին»։ 174.

«Մխանգամ մեր ձեռքն ընկնելուց յետ (յետոյ), փախչելու միտքը գլխիցդ հանիր։» 128.

«Այդքան մարդիկ ամպի մէջ զուր կորցնելուց յետ՝ նա այժմ ինձ հրամայում է յետս առնոյն (ձեռնունայն) վերադառնալ հայրենիք։» 102.

«Այս խօսքերից յետ՝ (յետոյ) Դիոմեդ կառքից թռաւ և սպասեց կռուին։» 75.

Յետոյ և յետ այնչափ տարբեր և որոշ են միմեանցից, որ նոցա անխտրաբար գործ ածելը սխալ պէտք է համարել. Այսպիսի փոխանակութիւն ներելի լինի թերևս չափաւոր գրուածքի մէջ, այն էլ չափազանց զգուշութեամբ, իսկ Պ. Վարդանեան՝ որ մեր արդի լաւ թարգմանիչներից մէկն է, զարմացնում է մեզ անխտրաբար այս բառերը միմեանց հետ փոխանակելովը։

ՎԵՐ ԵՒ ՎԵՐԵՒ.

Դ. «Փութանակի վէրև (վեր) ցատկեց Դիոմեդէս» 14 Նստած տեղից վեր ցատկել և ոչ թէ վերև։ Նոյնպէս՝ վեր թռչել, վայր ընկնել ևլն։ Աշակերտները սեղանից վէր կացան և ոչ վէրև կացան։

ԱՄԵՆԱՅՆ ԻՆՉ.

Ե. «Յոյների բանակի մէջ ամենայն ինչ շարժողութիւն դադարեցաւ։» 237.

Ինչը բոլորովին աւելորդ է։

«Դուրս քշելով սրտիս միջից ամենայն ինչ վատ խորհուրդ։» 28. ևլն.

ՓՈՇԻԻ, ՁԻԻ (*փոխանակ փոշու, ձիու*).

Ձ. *«Փոշիի (փոշու) մէջ թաւալուէին»* 56.

Թշնամու էրիձիի (երիձու) վրայ յարձակուիր և մեր բանակին (բանակը) տար այդ ազնիւ աւարը»: 75.

«Մինչև որ Պրիամոսի ապարանքը չկործանենք և Հեկտորին սուսերովս գլխատած չանենք փոշիի (փոշու) մէջ:»

«Բեղիի (բեղու) գլխին Աթենասը մի ոսկեձոյլ լոյծ (լուծ) կապեց և արծաթէ սանձերը փաթաթեց:» 80.

ԼՈՒԾ ԵՒ ՈՉ ԼՈՅԾ.

Է. *Լուծ բառի տեղ ամեն անգամ Պ. Վարդանեանը գրում է լոյծ, որ լուծանել բայի արմատն է:*

«Աքիլլէսի էրկլոյծի (երկլուծի) պէս երիվարներ դեռ ոչ մի մարդ չէ նուաճել նրանից առաջ:» 127.

«Արշաւասուր յետ է քշում իւր էրկլոյծը (երկլուծը)»: 220

Է և Ե.

Ը. *Պ. Վարդանեան շատ անգամ է—ի տեղ ե. և ե—ի տեղ է. է գործածում, օրինակ գէր գրելու տեղ՝ գեր է գրում, իսկ Աքիլլէս գրելու տեղ՝ Աքիլլես.*

«Այլխառն ցուլեր, գեր (գէր) ոչխարներ, պարարտ այծեր և լուսաժանի խոզեր:»

Գեր վարազ զոհեցին Արտեմիդային:» 179.

Գէր, գիրանալ՝ երբէք չէ կարելի եչով գրել:

«Հերակլես (Հէրակլէս) էլ իւր օրհասից չազատեցաւ»: 161.

Ինչի՞ համար Պ. Վարդանեան Պատրոկլէս գրում է—ով, իսկ Հերակլես—եչով. Ամբողջ գրքի մէջ Աքիլլէս գրուած է եչով՝ Աքիլլես. Ուղղագոյնն է Աքիլլէս կամ Աքիլլեւս.

«Այնտեղ հագաւ նա ոսկեզարդ զրահներն (զրահները), հեծաւ կառքն և հողմնթաց (հողմընթաց) յառաջ սլացաւ Հելլեսպոնտի վրայով:« 135.

Պէտք է գրել՝ հողմընթաց, խոչընդոտ, նորընծայ, հիւրընկալ ևլն.

ՈՐԴՈՑ, ԲԱՑ ԱՅՍՄԱՆԷ, ՔԱՆՍ.

Թ. *Գրաբարի հոլովները և ձևերը աշխարհաբարում գործածելիս, մեր կարծիքով, պէտք է նոցա անփոփոխ պահպանել:*

«Մեր որդոց կը սպանեն:» 198.

Պէտք է ասել՝ մեր որդուցը կամ մեր որդիներին:

«Բաց այսմանէ՝ նա դեռ սաստիկ կշտամբեց Ագամեմնոնին:» 18.

Պէտք է ասել՝ բաց յայսմանէ, կամ լաւ ևս բացի այս, բացի սորանից:

«Իրաւ՝ կեանքն (կեանքը) մի առաւել թանգ քան է, **քան** Տրոյայի մէջ դիզուած բոլոր գանձերը:» 112.

«Դուք սիրելի էք ինձ առաւել **քան** բոլոր Յոյները:» 107.

«Աչ Պասէյդոն կամեցաւ, որ որդին զօրութեամբ **քան** Հայրը մեծ լինէր, ոչ Արամազդ:» 5.

Կարելի է ասել քան, քանց, քան զ. քան Տրոյայի մէջ դիզուած բոլոր գանձերը. քան զհայրը։ Վերջապէս Միջնադարեան լեզուով ասենք քանց՝ քանց հայրը. մի նոր ձև էլ (քանս) ստեղծելու ի՞նչ կարօտութիւն կայ։

ԶԻ, ՔԱՆԶԻ.

Ժ. Զի և քանզի Պ. Վարդանեան այնպիսի անտեղութեամբ է գործածում ինչպէս մի ժամանակ էլ, որքան յիշում եմ, գործ էր ածում, զէրէ, զէրի, զէր։ Համերականի մէջ զերդ չկայ, բայց քանզիները այդ պակասը լրացնում են։

«Կամ դուցէ արդէն բոլորդ էլ փախչո՞ւմ էք, (փախչում էք), **քանզի** ընկաւ քաջն Հեկտոր:» 244.

«Միթէ քի՞չ է այն ցաւն (ցաւը), որ տալաքեց ինձ Արամազդ, **քանզի** խլեց իմ քաջ որդուն:» 240.

«Յոյները շատ հեռացած էին, **քանզի** դարձեալ տեսնում էին Աքիլլեսին (Աքիլլէսին):» 185.

«Թէգվիսի պաշտամունքը շատ դո՞ւր չէին (չեկաւ, պաշտամունքը դուր չեկաւ. պաշտամունքը եղանի է աշխարհագրութեան մէջ) Աստղիկին, զի Տրոյացւոց կուսակից էր:» 167.

«Իսկ դու, մայրիկ, մի՛ արգելիր ինձ կ—ռ—ել— (կռուել) զի չեմ կարող քեզ լսել, ինչքան էլ քեզ սիրէի:» 162.

«Դու երկար ապրելու չես, **քանզի** մահդ մօտալուտ է:» 148.

«Քանզի երբ կատաղեաւ, որ Տրոյացիք ուրախանայն թրեւում էին մարմինը:» 153.

Քանզի . . . Բրէ—ձէին—

«Սակայն շտապենք՝ **քանզի** գիշերն անցնում է:» 124.

«Մի բարկանար, **քանզի** մեր քունը փախել է:» 121.

«Այժմ գանք հանգստանանք, **քանզի** արդէն կաղցուրուել ենք թէ կերակրով, թէ գինով:» 117.

«Թող գնա կռւի, զի Արամազդ նրա խելքն արդէն թռցրել է:» 111.

Արդ **քանզի** ես մի մեծ յանցանք գործեցի . . . 104.

«Քանզի նա էր առիթ տալու այս առկայծի պատերազմին:«

«Քանզի մեզ էլ օժանդակ են աստուածները։»
«Քանզի մեծ եմ ձեզնից տարիքով։»
Քանզի նա մեծաւոր է, և խօսքերին կարելի է հաւատալ։«
Քանզի, քանզի, քանզի . . .

ԱՆԵԼ ՀԵՏ.

ԺԱ. Տես քեզ ինչ կանեմ։ (Սպառնալիք) Չէ կարելի ասել. «Քեզ հետ ինչ կանեմ։ Այլ է եթէ միասին գործելու մտքով ասումէ, Քեզ հետ այս ինչ գործը կանեմ, այսինքն՝ քեզ հետ միասին,

«Այն ժամանակ Կլիտեմնեստրան ասաց մարդուն, թէ նրանք արդէն գիտէին նրա անելիքն աղջկայ հետ։» 24.

Նրա անելիքն աղջկան կամ աղջկանը։ Հետը բոլորովին աւելորդ է. և ընդդէմ մեր լեզուի ոգուն։

Այս սխալ խնդրառութիւնը Պ. Վարդանեանի թարգմանութեանց մէջ շատ հազիւ է պատահում, սակայն անհրաժեշտ թուեցաւ մեզ այս մասին նկատողութիւն անել, որովհետև շատ ուրիշ գրողներ նոյն սխալը չափից դուրս՝ սովորութիւն դարձնելու չափ, կրկնումեն են ամեն օր։

(Շարունակելի) Միաբան.

ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍ.

Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,
Մոռացան մարդիկ՝ ամռան ամիսներ.

Կոյտ կոյտ դիզուեցին թխադոյն ամպեր,
Փչեցին սաստիկ՝ ցրտաշունչ հողմեր.
Մերկացան անտառք՝ չորացան բոյսեր,
Ի դերև ելան շատ և շատ յոյսեր։
Սարեր ու ձորեր՝ ամայի, թափուր,
Զրկուել են զարդից, տրտում են տխուր.
Դաշտերն էլ իրանց փայլը կորցրած՝
Կանաչ գոյնի տեղ՝ դեղին են հագած.
Սարսափդ տիրեց երկրին, Նոյեմբեր,
Եկան ու հասան ձիւնաբեր օրեր։
Հովիտ, բլուրներ կանաչից զրկուած,
Հովիւն իր սրինգն ու երգը թողած.
Գլխակոր տրտում հօտի ետևից
Շտապումէ տուն՝ խամրած դաշտերից.

Էլ չեն երևում սայլ ու գութաններ՝
Եւ էլ չեն լսվում մաճկալի երգեր.
        Սարսափ տիրեց երկրին, Նոյեմբեր,
        Քեզնից զարհուրած՝ ամենքն են լռել։
Այգիքն ամայի, արտերը թափուր,
Ժիր երկրագործներն ո՞ւր գնացին, ո՞ւր.
Մշակը դաշտին, այգեպանն այգուն,
Ցաւերն յիշելով՝ աւա՜ղ են կարդում.
        Սարսափ տիրեց երկրին, Նոյեմբեր,
        Չեն գործում այլ ևս՝ գործունեայ ձեռքեր։
Պտղատու լինին և թէ անպտուղ
Ծառերը կրում են տերևաթափ ճիւղ.
Ամենքն էլ մերկ են ու անշուք կանգնած՝
Կատաղի քամուն խաղալիք դարձած.
        Սարսափ տիրեց երկրին, Նոյեմբեր,
        Վերացան երկրից բերք ու բարիքներ։
Մանուկներն անգամ սարսուռ են զգում,
Երբ քո, Նոյեմբեր, անունդ են լսում.
Զրկվում են խեղճերն մանկական խաղից,
Չեն ուզում դուրս գալ՝ ծնողաց գրկից.
        Սարսափ տիրեց երկրին, Նոյեմբեր,
        Բոյն են շտապում՝ սողուն, թռչուններ։
Էլ հարս, աղջիկներ դաշտ չեն այցելում,
Եւ ոչ էլ իրանց պարը խաղն են խաղում.
Տղայքն էլ կարծես՝ տխուր ու տրտում,
Փակուած են անել ու մութը բանտում.
        Սարսափ տիրեց երկրին, Նոյեմբեր,
        Հեռացան մեզնից կենսատու օրեր։
Միայն ծերունիք անցեալից փորձուած,
Այսպէս Նոյեմբեր որ շատ են տեսած,
Խոստանում են մեզ և յոյս են տալիս,
Որ տեսնելու ենք մենք նորից Մայիս.
Եւ այն ժամանակ ամենքս էլ ուրախ՝
Կսկսենք ցնծալ աներկիւղ անվախ,
Դաշտ կերթանք բոլորս պայծառ ժպտով՝
Մեր Մայիս բերող Տիրոջ փա՜ռք տալով։

Գրաշար Ներսէս Տէր—Աւետիքեանց.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 10-ն տօնուեց Վեհափառ Հայրապետի Օծման երկրորդ տարեդարձը:

Նախընթաց երեկոյեան եկեղեցական թափօրով Վեհափառ Հայրապետը եկեղեցի եկաւ և Իջման սեղանի առաջ կատարուեց երեկոյեան ժամերգութիւնը:

Առաւօտը միաբանական ուխտը Ճեմարանի և Վաղարշապատի տղայոց ու օրիորդաց դպրոցների աշակերտները իրանց վարժապետներով ու վարժուհիներով և խուռն բազմութիւն խըմբուեց Վեհարանի գաւիթը, ուր և ըստ սովորութեան մաղթանք կատարուեց, այնուհետև թէ միաբանք և թէ այլք կարգ ըստ կարգէ բարձրացան Վեհարան և համբուրելով Վեհափառ Հայրապետի աջը շնորհաւորեցին Նորին Օծութեան Օծման տարեդարձը:

Թէ Ճեմարանի աշակերտների և թէ Վաղարշապատի դպրոցների կողմից ճառեր մատուցուեցին Վեհափառ Հայրապետին:

Հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ, որին ներկայ էր և Վեհափառ Հայրապետը, միաբանութեան ամառնային և ձմեռնային սեղաններում ճաշ տրուեց բազմաթիւ անձանց: Ճաշի ժամանակ Գեր. Տ. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան աւուր պատշաճին ատենախօսութիւն արեց և Ճեմարանի աշակերտներն էլ մէջ ընդ մէջ երգեցին:

Երեկոյեան ճրագալոյց կար. և Ճեմարանի աշակերտները իրանց ներդաշնակ երգերով մխիթարում էին խռնեալ բազմութեանը:

ՆՈՒԷՐ Կ. ՊՕԼՍԻՑ ԵՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Մայր Տաճարի վերանորոգութեան գործը Վեհափառ Հայրապետի հոգսերից առաջինը լինելով, Նորին Վեհափառութիւնը նախքան գործին ձեռնամուխ լինելը՝ բարեհաճեց դիմել հմուտ ճարտարապետաց խորհրդատուութեան. և առ այժմ ժողովրդին չըծանրաբեռնելու համար Սինօդի միջոցաւ պատուիրեց վիճակաց առաջնորդներին իրանց թեմի եկեղեցիներից նոյա կարա-

ղութեանը համեմատ մասն հանել՝ բարեպաշտաբար Աստրախանի և Տփխիսի թեմերի եկեղեցիքը դէպի իրանց Մայրն հոգևոր սիրոյ առհաւատչեան ցոյց տուին առատ նուիրաբերութեամբ՝ նոյն թեմերի սրբազան առաջնորդների եռանդուն գործունէութեամբ։ Բացի սորանից մասնաւոր անձինք ևս ինքնաբերաբար տալիս են իրանց սրտաբուղխ նուէրը, որ մեծ մխիթարութիւն է պատճառում։ Կ. Պօլսոյ Սրբազան Պատրիարքն ևս չըկամենալով անմասն մնալ՝ ինքն և իւր հետ Կ. Պօլսոյ առաջաւորք, որոնց անունները ընթերցողները կը գտնեն Սրբազան Պատրիարքի թղթին կից, հինգ հարիւր Օսմանեան ոսկի (5000 րուբլի) նուիրելով՝ խոստանումեն շարունակել հանգանակութիւնը։

Դնելով այստեղ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի գրութիւնը և Վեհափառ Հայրապետի պատասխանը օրհնաձիր կոնդակով, ցանկանում ենք և աղօթում որ Աստուած վարձահատոյց լինի բոլորին ևս, և վառ ու բորբոք պահէ դէպի Մայր Աթոռս ժողովրդեան սէրը։

ԹՈՒՂԹ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ.

«ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ։

«Յառաջ քան զայս հասեալ ի լսելիս մեր զի հրամայեալ իցէ Վեհափառութեան Ձերոյ նպաստս ի մերազնէիցն Ռուսաստանի հաւաքել՝ վասն նորոգութեան փառապանծ Տաճարին Սրբոյ Էջմիածնի, որոյ պայծառութեան նախանձախնդիր հանդիսանայք ցանգ, մեք, և որ ի մայրաքաղաքս են ազգայինք երևելիք, թէև ծանրաբեռնեալ պարտականութեամբ հանելովք ի թիկունս ազգայնոց արկածելոց յաղէտից հրկիզմանց և սովու, որ բազում աւերումն գործեցին և գործեն ի տեղիս տեղիս, ի սըրտէ ցանկացաք յոյժ մասնակից լինել ծախուց վերանորոգութեան Սրբոյ Տաճարին, և այսու ցուցանել զխանդակաթ սիրոյ զհաւաստիս, զոր տածեմք միշտ առ Մայրն լուսոյ, Ս. Էջմիածին, ուստի և փոյթ յանձին կալաք ձեռն արկանել ի հաւաքումն նպաստից, որոյ արդեանցն գումար հասեալ է ցայժմ հինգ հարիւր (500) Օսմանեան ոսկւոյ։

«Արդ, Վեհափառ Տէր, զգումար նպաստից, հանդերձ ցուցակաւ անուանց նուիրատուաց փութամք յուղարկել Սրբոյ

Օծութեան Ձերում փոխանակագրով (5000) հինգ հազար թղթադրամ ռուբլեաց, որ ծրարեալ գտանի ի թղթիս և որ հատուցի ի Կ. Խուպէսէրեան և յընկերութենէ, ի Տփխիս, և յաւելումն միանգամայն, զի որ յայսմհետէ հաւաքեսցի գումար դրամոյ, առաքեսցի փութով առ Վեհափառութիւն Ձեր։

«Խնդրելով ի Վեհափառութենէ Ձերմէ ընդունիլ ի հաճոյս ըզդուզնաքեայ նուիրատուութիւնս ի նպաստ վերանորոգութեան Սրբոյ Տաճարին և վարձատրել զմեզ և զհարազատ զորդիս Ձեր նուիրատուս երկնահաճոյ օրհնութեամբ Ձերով։

Մնամ Վեհափառութեան Ձերում անձնանուէր որդի

ՊԱՏՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի 22 Սեպտեմբերի 1887
և յԱշխարհին Թուականին ՌՅԼԶ·
ի Պատրիարքարանի Հայոց
Կոստանդնուպոլսոյ։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ։

Ն. Ս. Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր	Օ. Լ. 20·00
Տեարք Յ. և Մ. Եսայեան	» 100·00
» Գրիգոր և Ներսէս Ներսէսեան	» 100·00
Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Նուրեան	» 10·00
» Մատթէոս և Աբիկ Ունճեանք	» 100·00
Տեար Յարութիւն Մանուկեան	» 20·00
» Յակոբ Նորատունկեան	» 50·00
» Սերովբէ և Սարգիս Կիւլպէնկեանք	» 100·00

ընդ ամենն հինգ հարիւր Օսմանեան ոսկի, որ առնէ հինգ հազար թղթադրամ ռուբլի Ռուսական։

ԿՈՆԴԱԿ Վ.ԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

Վեհաշնորհ պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ Բարձր Սրբազան Յարութիւն Արքեպիսկոպոսի եղբօր մերոյ սիրեցելոյ ի Տէր խնդալ։

Գոհունակութեամբ սրտի ընկալաք զգրութիւն Սրբազնութեանդ ի 22 սեպտեմբերի անցելոյ թիւ 1183 ընդ փոխանակագրոյ հինգ հազար թղթադրամ ռուբլի նուիրանաց ի նպաստ վերաշինութեան Մայր Տաճարի Ս. Աթոռոյս Էջմիածնի։

Գերապատիւ եղբայր ի Քրիստոս, ինքնայորդոր բարեգործութիւնդ այդ, զոր հանդիսացուցիք Դուք և նուիրատու Մեծապատիւ սիրելիքն մեր՝ առաջի ազգայնոց մերոց Ռուսաստանեայց, անժխտելի ապացոյց է ապաքէն որդիական անձուկ սիրոյ և ջերմեռանդութեան Ձերոյ առ Մայրս շնորհաց և անխզելի յօդակապ բարոյական միութեան ազգի ընդ Արարատեան հնադարեան նուիրական Տաճարիս։ Ընկալցի Տէր Աստուած ի հաճոյս բարերար կամաց իւրոց զսրտաբուղխ նուէրս Ձեր և բարեզգաց իշխանացդ բարեպաշտից ի նպաստ կարևորագոյն ձեռնարկութեանս մերում. օրհնեսցէ՛ տէր Աստուած զՁեզ և զծնողասէր զնուիրատուսդ իւրով Աստուածային օրհնութեամբ, լցուցանելով զամենեսին երկրաւոր և երկնային բարութեամբք՝ ամէն։

Ողջոյն հայրական սիրոյ և օրհնութիւն նուիրելով նպաստամատոյց բարետոհմիկ սիրելեաց մերոց, մնամք վասն Ձեր և վասն նոցին վսեմութեանց ամենաջերմեռանդն աղօթարար

(Ստորագրութիւն).

Համարաւ 520.

Ի 15 Հոկտեմբերի 1887 ամի.

և Թուականիս Հայոց ՌՅԼԶ.

ի Ս. Էջմիածին։

ՀԱՇԻՒ ՇԱՄԱԽՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԿԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ.

ՄՈՒՏՔ.

1 Առ 1ն Սեպտ. 1886 ամի մնացորդ ուսումնարանական մայր գումար . . . . 4250 90'/.

Ընթացս 188⁶/₇ ուսումնական տարւոյ մտել են՝

2 Նուիրադրամք ստացեալք վասն մետրիքական վկայականաց 1385

3 Նուիրադրամք ի պսակելոց Շամախւոյ վիճակի . . 402

4	Կապալադրամք հողոց Մէյսարու վանից վասն երկուց ամաց	180	
5	Կտակ աւանդեալ ի հանգուցեալ Թադէոս Աւագ քահանայէ Բուդաղեանց	300	
6	Թոշակադրամք ի կարող աշակերտաց դպրոցին . .	297	
7	Արդիւնք յօրինակատարութեանց գիւղաքաղաքին Սալեանու	20	
8	Տոկոսիք ուսումնարանական մայր գումարաց գտելոց յարքունի դրամատան	265	13
	Գումար մուտից է	7100	3'/.

ԾԱԽՔ.

1	Ռոճիկ երկուց ուսուցչաց դպրոցին . . .	800	
2	Ռոճիկ Քարտուղարի	84	
3	Վարձ ծառայի դպրոցին	60	
4	Ի գին վառելափայտի	26	63
5	Ցաղագս նորոգելոյ զնստարանս և գրատախտակս դպրոցի և այլոց կարևոր պիտոյից	77	81
6	Վասն ապահովելոյ զուսումնարանական ինն հատ խաղարկական տոմսն	7	30
7	Ցաղագս վճարեալ տոկոսեաց անցեալ ժամանակի 20 հատ գնեալ սերի տոմսից	18	22
8	Ցաղագս հեռագրութեանց և փոշտային մարկայից .	9	15
9	Տուաւ ի նպաստ շինութեան Օրիորդական դպրոցին Շամախւոյ	200	
	Գումար ծախուց է	1283	11
	Եւ առ 1ն Սեպտ 1887 ամի մնայ ուսումնարանական մայր գումար	5816	92'/.

Շամախու եկեղեցական-ծխական երկդասեան դպրոցի Հոգաբարձութիւնը սորա հետ ուղարկում է Խմբագրութեանդ նոյն դպրոցի անցեալ $188^{6}/_{7}$ ուսումնական տարուայ մուտից և ելից հաշուեցուցակը՝ հրատարակելոյ համար «Արարատ» ամսագրիդ առաջիկայ տետրակներից մէկում։

Ի 11ն Նոյեմ. 1887 ամի

Ի ք. Շամախի,

Հոգաբարձուք

Գէորգ Կաճկաճեանց

Յովհաննէս Խալափեանց

Ս.Գ. Զախարեանց.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

Թէլաւի Հայոց Եկեղեցական—Ծխական երկսեռ ուսումնարանների 1886 Թ. Սեպտեմբերի 1-ից մինչև 1887 Թ. Սեպտեմբերի 1-ը։

—

ՄՈՒՏՔ

		Ռ.	Կ.
1.	Առ 1-ն Սեպտեմբերի 1886 ամի մնաց	2405	95
2.	Մոմավաճառութեան միամեայ արդիւնք	961	75
3.	Աշակերտուհիների թոշակադրամ	714	70
4.	Աշակերտների թոշակադրամ	159	50
5.	Երկու եկեղեցիներից	180	»
6.	Ուխտատեղիներից	92	28
7.	Տների և կրպակների վարձ	234	»
8.	Ուսումնարանապատկան այգու արդիւնք	115	»
9.	Ձեռագործի վաճառումից	142	25
10.	Նուէր մի հանգուցեալի տէրերից	6	»
11.	Տոկոսիք մայր գումարի	63	85
	Ընդ ամենը	5075	28

ԵԼՔ

		Ռ.	Կ.
1.	Ուսուցիչների և վարժուհիների ռոճիկ	1500	»
2.	Ծառաների և մոմավաճառների ռոճիկ	264	»
3.	Վառելափայտ	100	»
4.	Գետնահարկ այգիների և վարելահողերի	16	50
5.	Ուսումնարանները հրդեհի դէմ ապահովելու համար	80	75
6.	Գարուսի և ձեռագործի իրեղէնների համար	35	5
7.	Ուղարկուեցաւ Կոնսիստորի ի հաշիւ ռոճկի դպրոցական քարտուղարի հանդերձ փոստայի ծախիւք	50	32
8.	Ուսումնարանների և ուսումնարանապատկան շինութիւնների նորոգութեան վրայ, այլ և զանազան մանր և անակնունելի ծախք	154	71
	Ընդ ամենը	2201	33

Ծախքը հանելով մուտքից մնում է առ 1 ն Սեպտեմբերի 1887 ամի երկու հազար ութ հարիւր եօթանասուն և երեք (2873) րուբլի իննսուն և հինգ (95) կոպէկ։ Այս գումարից երկու հազար րուբլին գտնվում է շահեցողութեամբ Թիֆլիսի Փոխադարձ Վարկի ընկերութեան բանկայում ընդ

№ № 52, 795 և 53, 324, իսկ մնացեալ գումարի մի մասով կառավարվում է մոմի պահեստը, միւս մասը, իբրև առձեռն պատրաստի դրամ, գտնվում է գանձապահ հոգաբարձուի՝ պ. Գասպար Մղքոեանի ձեռքում ընթացիկ ծախսերի համար։

Ներկայացնելով յարգելի խմբագրութեանդ այս համառօտ հաշիւը՝ պատիւ ունիմ յայտնել և այն որ սա միայն քաղուածք է Վիճակային Կոնսիստորիայից ինձ տրուած ժապաւինեալ մատեանից, որտեղ մանրամասնաբար յականէ յանուանէ, կոպէկ առ կոպէկ ճշտութեամբ մուծուած է բոլոր ել ու մուտքը։ Ամենայն տարի ուղարկել եմ Կոնսիստորիայի վերաքննութեան, տպագրել եմ տուել յարգելի «Արարատ»-իդ մէջ և մինչև անգամ կարդացել եմ խուռն բազմութեան ներկայութեամբ Ս. Վարդանանց տօնի օրը։

Գէորգ Աւագ քհնյ. Տէր Սարգսեանց

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ — ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ՅՈՎՍԷՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ,

Սահակ—Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն՝ զոր Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանց հաստատած է, պիտի կատարի յառաջիկայ 1888 տարւոյ Սրբոց Թարգմանչաց տօնի օրն։ Հետևապէս Գործադիր—Մնայուն Յանձնաժողովս կփութայ այսու Յայտարարութեամբ վերստին հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն որ ունին Ազգային լեզուաքննութեան և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ. ձեռագիր կամ տպագիր, և կփափագին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, փութան յուղարկել զայնս առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պօլիս, մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին։

Լօնդօնից ստացած մեր մի նամակից գոհունակութեամբ համառօտում և հաղորդում ենք որ Մայր Աթոռոյս միաբան Արժանապատիւ Եսայի Վարդապետը իւր կարճ ժամանակեայ հովուութեամբ յաջողել է Անգլիայի մայրաքաղաքում ոչ միայն հայ ժողովուրդ գոյացրել, այլ և ազգային աղօթատուն հաստատելուց և կառավարելուց յետոյ յաջողել է 300 անգլիական ոսկի ևս ձեռք բերել մի եկեղեցի կառուցանելու նպատակով. և այժմ Արժ. Հայրը իւր բոլոր ջանքը դարձրել է գումարը շատացնելու, որպէս զի մօտ ապագայում սկսուի գործը։

Արժ. Եսայի Վարդապետ Մանչէստրի հայ ժողովրդի խնդրանօք մի քանի տարիներ նոցա հովուելուց յետոյ իւր յատուկ հրաժարականով տեղի տուեց Արժ. Յուքիաս Վարդապետ Պարոնեանին և եկաւ Մայր Աթոռ հետն ունենալով Մանչեստրի Հայոց յարգանքն ու համակրութեան հաւատիքը։ 1884 Թուի սկզբին Արժ. Եսայի Վարդապետ ուղևորեց դէպ ի Լօնդօն և այնտեղ հայ աղօթատուն հաստատելով հովուումէ տեղւոյն Հայերին։

—

Շամախուց մեզ գրումեն որ տեղւոյն առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ Եպիսկոպոս սոյն Նոյեմբերի 8ին շքեղ հանդիսով օծել է Սաղիանու Ս. Ստեփաննոսի վանքը որ երկրաշարժից խախտուած լինելով՝ Շամախւոյ նախկին Կառավարիչ և Սինօդի աւագ Անդամ Գեր. Տէր Թադէոս Սրբազան Արքեպիսկոպոս 1879 Թուից ձեռնարկել էր հիմքից կառուցանել կոփածոյ քարերով։ Շինութիւն յառաջ էր գնում յատկապէս Բաքու քաղաքի և Սաղիանու հայ ժողովրդեան նուիրատուութեամբ և Գեր. Տէր Թադէոս Արքեպիսկոպոսի ջերմեռանդն աշխատութեամբ։

Շինութիւնը աւարտուելու մօտ էր երբ Նորին Սրբազնութիւնը նշանակուած լինելով Սինօդի անդամ ուղևորեց դէպ ի Մայր Աթոռ Մայիս ամսին, որով և իւր ջանքով վերաշինուած վանքի օծում վիճակուեց այժմեան առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան Եպիսկոպոսին։

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ նոր հրատարակութիւնները։

Ա. ԵՐԱԽԱՅՐԻՔ բ. գիրք. գինն է յիսուն կօպէկ Թուղթը լաւ է, տպագրութիւնը մաքուր։ Գործ. Արշակ Մեհրաբեանի (Սրինգ)։

—

Բ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՐՔԸ. առաջին մասը, երրորդ և մասամբ երկրորդ տարուայ ուսուցման նիւթ. աշխատասիրեց Նիկողայոս Տէր—Ղևոնդեան. երկրորդ բարեփոխուած տպագրութիւն. գինն է 30 կօպէկ։

—

Գ. ՄԱՆԿԱՏԾՈՒԹԻՒՆ. Դասախօսութիւն. [illegible] և լրացրած գործ. բժշկապետ Գրիգոր Գասպարեանց Տէր Գրիգորեանցի Ղլլարեցւոյ. գինն է 50 կօպէկ։

Դ. ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵՒ ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ Ազգային Վարչութեան Զմիւռնիոյ, 1885 Յուլիս 22 էն 1887 Օգոստ. 19։

—

Ե. ԷԼԻԶԱՅԻ ՎԻՇՏԸ (վէպիկ) Թարգ. Ռուս. Բարսեղ Քեամալեանի. գինն է 20 կոպ.

—

Զ. Международный языкъ, предисловія и полный учебникъ. Др. Эсперанто. цѣн. 15 коп- Варшава

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս յ3 Օգոստոսի ընդ համարաւ 397՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան Թեմական դպրանոցի վիճակին Հայոց Նորոյ—Նախիջևանի և Բեսսարաբիոյ Պատուելիք՝ Գաբրիէլն Յարութիւնեան Մելքոնեանց, Պետրոս Խաչերեսեան Քեչիկեանց, Սարգիսն Կարապետեան Խաճեան, Յովհաննէսն Թադէոսեան Քէլլէշահինեան, Ստեփանն Աստուածատրեան Կենճոլեան և Սարգիսն Նիկողայոսեան Քիստեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 17 Օգոստոսի ընդ համարաւ 419՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական երկսեռից ուսումնարանաց Հայոց Աստրախան քաղաքի պատուելիք՝ Բժիշկ Աղէքսանդրն Զաքարեան Մարգուզեանց, Կարապետն Սիմէօնեան Սօքօլեանց, Յովհաննէսն Գրիգորեան Սողոմոնեանց, Յովհաննէսն Գրիգորեան Սարգսեանց, Սիմէօնն Մարտիրոսեան Պօպովեանց և Բժիշկ Սիմէօնն Մովսիսեան Պօպովեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս յ2 Սեպտեմ. ընդ համարաւ 457 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական ծխական միդասեան արականաց ուսումնարանի Չխար գեղջ Բարեկրօն Եղիշէ քահանայն Քափամաճեան և պատուելիք երեցփոխան Սահակն Գրիգորեան և Իսահակն Գրիգորեան Սիմոնգուլեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս յ2 Սեպտեմ. ընդ համարաւ 458՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան արականաց ուսումնարանին Հայոց Բաթում քաղաքի բարեկրօն Կոստանդին քահանայն Տէր Ստեփաննոսեան և պատուելիք՝ Բէգլարն Կարաբէգեան, Սմբատն Կարինեան և Յովակիմն Մելքոնեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 25 Սեպտեմ. ընդ համարաւ 489 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան արականաց ուսումնարանի Ս. Թադէոս եկեղեցւոյ Հայոց Գնիշիկ գեղջ՝ բարեկրօն Թադէոս քահանայն Տէր Աբրահամեան և պատուելիք՝ երեցփոխան Մարգարն Համբարձումեան և Թորոսն Հարոյեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս յ2 Հոկտեմբերի ընդ համարաւ 496 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան արականաց ուսումնարանի Հայոց Պետրովսկ քաղաքի՝ պատուելիք ոստիկանապետ Բաղդասարն Սարգարեանց, երեցփոխան Աւետիսն Տուրփայեանց, Յովհաննէսն Ղարսկէօեանց, աստիճանաւոր Դանիէլն Բարումեանց. Յովսէփն Յովակիմեանց և Կոստանդինն Կոստանեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 5 Հոկտեմ. ընդ համարաւ 501՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան կենդրոնական արականաց ուսումնարանի Հայոց Գիրք գեղջ՝ բարեկրօն Արիստակէս քահանայն Տէր Յակոբեանց և պատուելիք երեցփոխան Յովհաննէսն Մովսիսեանց և Յովհաննէսն Մատթեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 5 Հոկտ. ընդ համարաւ 502՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան կեդրոնական արականաց ուսումնարանի Հայոց Դալակս գեղջ բարեկրօն Սարգիս քահանայն Տէր Սահակեանց և պատուելիք երեցփոխան Գրիգորն Տէր Յովսէփեանց և Բաղասին Տէր Գասպարեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 14 Նոյեմբերի ընդ համարաւ 571 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական—ծխական միդասեան երկսեռից ուսումնարանաց Հայոց Ջալալ—օղլուի՝ պատուելիք երեցփոխան Դանիէլն Չիթախեանց, Նաւասարդն Ջաղինեանց, Նիկողայոսն Հայրապետեանց և Բարսեղն Մարտիրոսեանց։

ՍԻՆՕԴԻ ՍԵՊՏՄ. ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ։

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

28 Սեպտեմ. Նոր—Նախիջևանցի հանգուցեալ այրի Եղիսաբէթ Կարապետ—Օղլեանցին ի յիշատակ նորա ազգականները ուղարկած լինելով նուէր յ‥‥ն ր‥‥բլէ Սինօդը հրամայեց գանձապահին գրել Մայր Աթոռոյս արդեանց տոմարում և տեղեկութիւն տալ Նոր—Նախիջևանու Հոգևոր Կառավարութեանը՝ ստացման մասին։

—

25 Սեպտեմ. Սինօդը շրջաբերական հրամանով պատուիրեց բոլոր վիճակային ատեաններին, որ այդ ատեանները ծննդեան վկայական տալու ժամանակ հրահանգուին միշտ 1876 թուին հրատարակուած օրինաց 9-որդ հատորի 1047, 1048, 1052 և 1053 յօդուածներով։ Վկայականներ տան ծընեալների, մկրտուածների, մեռածների և պսակուածների համար միայն հիմնուելով չափաբերական մատեանների մէջ արձանագրուած տեղեկութեանց վերայ. հակառակ դէպքում կ՚ենթարկուեն խստագոյն պատիժների քրէական պատժապարտական օրէնքին համեմատ։ Իսկ երբոր ո՛ր և է անձի ծընընդեան, պսակի կամ մահուան տեղեկութիւնները չեն երևիլ չափաբերական տոմարում, 1857 թուին հրատարակուած օրէնքի Ժ րդ հատորի 125 յօդուածի համեմատ վկայականները տալ հիմնուելով օրինաւոր, ճիշտ և երդմնաւոր քննութեան վերայ, և քաղաքական դատավարութեան օրինաց 1354 յօդուածի համեմատ այսպիսի դէպքերում նախապէս զգուշացնել բոլոր հարցանելի վկաներին, որ եթէ նոքա ճշմարտութեամբ վկայութիւն չըտան հասակի տարիների և ծնուածների, պսակուածների կամ մեռածների անունների մասին, և եթէ յայտնուի նոցա վկայութեան մէջ ստութիւն կամ խարդախութիւն, կ՚ենթարկուեն պատժապարտութեան քրէական օրինաց 236 յօդուածի համեմատ։

—

5 Հոկտեմ. Սինօդը որոշեց Մայր Աթոռոյս Ագարակի տեսուչ Արժ. Անտօն Վարդապետ Վարդազարեանին կարգել Չարէքայ Անապատի վանահայր, և Հաղբատայ վանահայր Արժ. Յովսէփ Վարդապետ Խարազեանին կարգել Ագարակի տեսուչ։

12 Հոկտ. Սինոդը որոշեց Սանահնոյ միաբան Գեղամ Վարդապետ Բաքջանեանին կարգել Հաղբատայ վանահայր։

—

12 Հոկտ. Սինոդը Վեհափառ Հայրապետի տարւոյս Սեպտ. 24 ին № 481 կոնդակին համեմատ Զէյթունի հրկիզեալ եկեղեցիքն ու դպրոցները վերաշինելու համար շրջաբերական հրամանով պատուիրեց կովկասեան հայ վիճակների առաջնորդներին որ իրանց փոխանորդների ու գործակալների միջոցով հանգանակութիւն սկսեն, և հանգանակուած դրամը ուղարկի Կ. Պօլիս՝ Զէյթունի հրկիզելոց Յանձնաժողովոյ ատենապետ Մեծապատիւ Պարոն Պատրիկ Էֆէնտի Գիւլբէգեան ուղարկեն, իւրաքանչիւր անգամին Սինոդին տեղեկութիւն տալով դրամոց քանակութեան մասին։

—

14 Հոկտ. Վրաստանի Հայոց առաջնորդ Գեր. Տ. Արիստակէս Սրբազան եպիսկոպոս տարւոյս Հոկտ. 2 ին յայտարարութեամբ ուղարկած լինելով Մայր Տաճարի վերաշինութեան համար հանգանակած այլ ևս 1473 րուբլի 68 կոպ. Սինոդը որոշեց հրամայել գանձապահին դրել Աթոռային արդեանց տոմարում։ Նոյն նպատակով Նորին Գերապատուութիւնը տարւոյս Մայիսի 28 ին ուղարկել էր այլ ևս երեք հազար հինգ հարիւր րուբլի. բոլորը՝ 4973 րուբլի 68 կոպ.

—

21 Հոկտ. Սինոդը որոշեց հրամայել գանձապահին Թեղուտեցի հանգուցեալ Մարիամ Ոսկանեանին ի յիշատակ յօգուտ Ճեմարանի ուղարկուած երեք հարիւր րուբլին դրել աթոռային արդեանց տոմարում՝ ստացման մասին տեղեկութիւն տալով Վրաստանի Հայոց Կոնսիստորիային։

—

28 Հոկտ. Սինոդը Վեհափառ Կաթուղիկոսի № 550 կոնդակին համեմատ Մայր Աթոռոյս միաբան Արժ. Եղիա Վարդապետ Հասան-Ջալալեանցին կարգեց Տպար. Ժողովոյ անդամ։

—

29 Հոկտ. Սինոդը որոշեց հրամայել գանձապահին գանձակեցի Գրիգոր քահանայ Բաբաքեխեանի յօգուտ Ճեմարանի ուղարկած 5 րուբլին դրել մուտք Աթոռային արդեանց տումարում և տալ տեղեկութիւն յիշեալ քահանային։

—

30 Հոկտ. Կ. Պօլսից բարեպաշտ անձանց նուիրած հինգ հազար րուբլին փոխանակագրով Պ. Կարապետ Խուրէսէրեանից և ընդհ. ստանալու համար Սինոդը արդէն յանձնարարած լինելով Տփխիսու աթոռային կալուածոց տեսուչ Արժ. Յովհաննէս Վարդապետ Շիրակունուն. և Նորին Արժանապատուութեան ձեռքով ստացած լինելով՝ որոշեց դրել գանձապահին աթոռային արդեանց տոմարում մուտք գրել և տեղեկութիւն տալ Արժ. Յովհաննէս Վարդապետին։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

12 Հոկտ. Սինոդը որոշեց Սևանում միաբանակցող Սարկաւագ Յովհաննէս Մանուկեանին կռուարար, խռովայոյզ և այլ անվայել վարմանց, գայթակղական և անհանգիստ բնաւորութեան համար զրկել սարկաւագութեան կոչումից, և այս իւր որոշումն կատարու համար հրամայեց Երևանայ Կոնսիստորիային յիշեալ Յովհաննէս սարկաւագին կոչել իւր ատեանը և առնելով նորանից ուրարն ու սարկաւագութեան վկայականը և հանելով վերակուն զրկել հոգևոր կոչումից և գրել Երևանայ Նահանգական վարչութեան կարգադրութեան Յովհաննէսին համարել ի շարս ռուսական հարկատուաց. իսկ յիշեալ Մանուկեանին Սարկաւագ չճանաչելու համար հրատարակել «Արարատ» ամսագրի միջոցաւ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Վեհափառ Հայրապետի բարի ցանկութեան և կամքի համաձայն՝ առաջիկայ 1888 թուականից սկսած Արարատ ամսագիրը թէ իւր բովանդակութեան և թէ դիրքի կողմանէ ենթարկուելու է փոփոխութեան։ Մայր Աթոռոյս միաբանութեան հետ հրաւիրւում են աշխատակցելու Արարատին և Ճեմարանի ուսուցչական խումբն, ինչպէս և ազգիս մէջ ամենուրեք գտնուող բանասէր գիտնական և ուսումնական անձինք, որոնք հետաքրքրւում են ազգային պատմութեան, գրականութեան, ազգային եկեղեցւոյ և եկեղեցական դասի վիճակին, ինչպէս և հոգևոր ծխական դպրոցների բարեկարգութեան վերաբերեալ նիւթերով։ Արարատը կըբովանդակէ իւր մէջ և ընտիր քարոզներ ու բարոյական գըրուածքներ, ինչպէս և համառօտութիւնք թէ Նորին Օծութեան և թէ Ս. Սինոդի պաշտօնական կարգադրութեանց, որոնք կվերաբերին հայ եկեղեցական դասին և հայ դպրոցներին։ Կհաղորդուին նոյնպէս և ամեն տեղերի ազգային մասնաւոր և բարոյական վիճակին վերաբերեալ տեղեկութիւնք թէ ազգային հրատարակութիւններից և թէ թղթակցութիւններից քաղուածօրէն։ Խմբագրութիւնս յոյս է տածում, որ հայ բանասէրք չեն զլանալ իւրեանց գործակցութիւնն, որ Ս. Աթոռոյս ամսագիրը կարող լինի ճշգիւ ծառայել իւր նպատակին,

որ է մնաւոր և բարոյական կերակուր տալ իւր ընթերցողաց, մանաւանդ եկեղեցականաց, որոց մեծամասնութիւնն կարօտ է թէ գիտութեան և թէ ղեկավարութեան իւր պարտքը դէպի Մայր Եկեղեցին և դէպի իւր հօտը սրբութեամբ կատարել կարողանալու համար:

Արարատի խմբագրութիւնը, Նորին Օծութեան հրամանի համեմատ, պարտաւորվում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրըն այդ կըցանկայ: Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումն կպատկանի մասնաժողովին, որ հրամանաւ Նորին Օծութեան կըկազմուի:

Արարատը կհրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5 ր. իսկ Հնդկաստանում և Եգիպտոսում 6 րուբլի: Հայաբնակ գաւառներում և քաղաքներում ստորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին: Հասցէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Կոմիտէին:

———

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հռովմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ ա. աղ. քահանայից	—	10
Հրահանգ վասն Թեմական տեսչաց	—	20
Ձայն բազմաց	1	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ժամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական ձեռաց	60	—
Ճանապարհորդութիւն Հակստհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցուելուած Ժամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հոռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Քնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1888)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղչումն կը լինի 20°/o-ին (ճանապարհածախքը գնողի վրայ)։

«ԱՐՁԱԳԱՆՔ»

Շաբաթաթերթը 1888 ին կըհրատարակուի մի և նոյն դիրքով: Տարեկան բաժանորդագինն է 5 րուբլի· կէս տարուանը՝ 3 րուբլի:

Օտարաքաղաքացիք դիմում են Тифлисъ. въ редакцію „Арцаканкъ", արտասահմանից Tiflis, Rédaction du journal „Ardzagang".

«ԱՂԲԻՒՐ»

Մէտամեայ պատկերազարդ հանդէս (երեխաների և դպրոցականների համար):

Աղբիւրի բաժանորդագինն է 3 րուբլի· պրէմիաների ծրարի համար 3 հատ 7 կոպեկնոց մարկա: Ապառիկ ոչ ոքից չէ ընդունվում.

Հասցէն՝ Тифлисъ редакція „Агбюръ" իսկ արտասահմանից Tiflis (Caucase) Rédaction du journal „Agbur".

«ՄՇԱԿ»

Գրականական և քաղաքական լրագիր:

Մշակի տարեկան գինը 10 րուբլի է, իսկ կէս տարուանը՝ 6 րուբլի· հասցէն՝ Тифлисъ, редакція газеты „Мшакъ" արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak".

«ՆՈՐ—ԴԱՐ»

Քաղաքական—գրական ամենօրեայ թերթը առաջիկայ 1888 թուականին կըհրատարակուի նոյն դիրքով և ծրագրով:

Տարեկան գինն է 10 րուբլի· վեց ամսուան՝ 6 րուբլի· արտասահմանում տարեկան 30 ֆրանկ:

Հասցէ՝ Тифлисъ, въ редакцію ежедневной газеты „Норъ-Даръ" կամ Tiflis (Caucase) Rédaction du journal „Nor—Dar"